

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՐԲՈՒՅԻ ԼԻՍԻՑՅԱՆ. ԲԵՄԱԴՐՈՂ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂ

Ականավոր գիտնական Սրբուիի Լիսիցյանը մեծ ներդրում ունի հայրենական գիտության և մշակույթի ասպարեզներում: Նա լայն գործունեություն է ծավալել նաև հայկական ժողովրդական պարերի ռենադրման ասպարեզում և այդ բնագավառի հանրահայտ գործիչներից է:

Նրա գործունեությունը հիմնականում ձևավորվել է XX դարի 20-30-ական թվականներին, հայագիտության մեջ հիմք դնելով գիտության մի նոր ուղղության՝ պարարվեստաբանությանը (եթոնխորեոլոգիա):

Գիտության այս ճյուղը, գրանցված և դասակարգված ազգագրական նյութի հիման վրա, ուսումնասիրում է ժողովրդական ավանդական և կենցադային պարի եթնիկ առանձնահատկությունները, ժագումնարանությունը, զարգացման օրինաչափությունները, ժողովրդական արվեստի կազմը ռենադրականի հետ և դրանց փոխակերպումները ժամանակի ընթացքում:¹

Բազմաշնորհ գիտնական Սրբուիի Լիսիցյանը, լինելով հմուտ պատմարան ու ազգագրագետ, երաժշտագետ ու րանազետ խորապես ուսումնասիրել է հայկական ժողովրդական պարերը, թատրոնը և հայոց մշակութային ժառանգության այլ ոլորտները:²

Սրբուիի Լիսիցյանը ծնվել է 1893թ. Թիֆլիսում, հայտնի հայագետ, ազգագրագետ, թարգմանիչ, մանկավարժ, «Դասկեր» մանկական ամսագրի խմբագիր, «Լեռնային Ղարաբաղի հայերը», «Զանգեզուրի հայերը», «Ազգագրական հարցարան», «Ժողովրդական մանկական խաղեր» և այլ ուսումնասիրու-

թյունների հեղինակ Ստեփան Լիսիցյանի ընտանիքում:³

Նրա մայրը՝ Կատարինե Լիսիցյանը, նույնպես գրադիվել է մանկավարժությամբ, Թիֆլիսում հիմադրել մասնավոր գիմնազիա:

Նախնական կրթությունը ստանալով մոր հիմնադրած դպրոցում, ապա սովորելով Թիֆլիսի իգական գիմնազիայում՝ հետագայում Արք. Լիսիցյանը գերմաներեն լեզու և պատմություն է դասավանդել Լիսիցյան դպրոցում:⁴ Այնուհետև ուսումը շարունակել է Մոսկվայում, սովորելով Գերյեի անվան իգական բարձրագույն դասընթացների ալյասմագիլսովայական ֆակուլտետում, O. Օզարովսկայայի դրամայի ու արտահայտիչ խոսքի և հ. Չերնիցկայայի բալետային ստուդիաներում (1917թ.):⁵

1916-17թթ. Արք. Լիսիցյանն Ի. Չերնիցկայայի ստուդիայում աշխատել է ողպես դասատու: Այդ շրջանում ուսումնասիրել է գերմաներեն և ֆրանսերեն լեզուներ:

1917թ. վերադարձել է Թիֆլիս, հիմնել ասմունքի, ոիթմի ու պյաստիկայի ստուդիա, որը 1921թ. վերակազմավորվել է ոիթմի ու պյաստիկայի ինստիտուտի:⁶ 1921-25թթ. միաժամանակ պաշտոնավարել է Թիֆլիսի կոնսերվատորիայի օպերային դասարանում, թուրքական դրամատիկ թատրոնում և «Յայարտան» դրամատիկական ստուդիայում որպես րեմական շարժման, ոիթմի ու պարի դասատու:⁷

¹ Պ. Արտիկրոսյան, Ստեփան Լիսիցյանը մանկավարժ, Եր., 1989, էջ 34-35:

² Կ. Լիսիցյան, Նվիրում, Եր., 1982, էջ 61, Ջ. Խաչատրյան, Ծրբու Լուսուսան, Եջ, Մ., 1981, 315:

³ Գ. Ստեփանյան, Աշվա. աշխ., հ. Բ, 31-32, Ե. Սուրու, Վե օ բալետ, հայութական ստուդիայում որպես րեմական շարժման, ոիթմի ու պարի դասատու:

⁴ Ժ. Խաչատրյան, Սորուի Լիսիցյան. ԴՍԴ, հ. 4, Եր., 1978, 625.

⁵ Բ. Պարությունյան, Աշվա. աշխ., 75:

¹ Էթնոգրաֆիя и смежные дисциплины, под ред. Ю. Бромлея, М., 1988, с. 103-104.

² Յ. Պետրոսյան, 75-летие Србии Лисициан, Литературная Армения, 8, 1968, с. 103-104.

Ոիթմբ ու պլաստիկայի ինստիտուտը գործել է Վրաստանի ժողկոմխորհին առընթեր և մեծ հաջողություն է ունեցել: Օգտվել է պետական ուսումնական հաստատությունների համար հատուկ սահմանված բոլոր արտոնություններից և պաշտոնապես կրել է Սրբ. Լիսիցյանի և նրա ամուսնու՝ Լեռն Շազարապետյանի անունը¹ (աղ. VII):

Դեռևս Մոսկվայում, ուսումնասիրելով ռիթմապատիկ շարժնան ուղղությունները (Ժ.Դալկող, Ֆ.Դելսարտ, Ա.Դունկան), Սրբ. Լիսիցյանը թիֆլիսյան ինստիտուտում ուսուցումը տարել է Ֆ.Դելսարտի համակարգով և իր գործնական մշակմամբ:² Առուղիայում գործել է երեք ֆակուլտետ՝ րեմադրական, մանկավարժական և ռեժիսորական,³ որտեղ պատրաստվել են պարարվեստի, օպերայի, դրամատիկ թատրոնի, կինոյի և բեմական շարժման նախագետներ: Ինստիտուտում ուսուցանվել են ոչ մբայն գործնական առարկաներ՝ պար, ռիթմ, պլաստիկա, դիմայադ (միմիկա), ժեստ, ֆիզկուլտուրա, այլև տեսական՝ Դելսարտի տեսություն, արվեստների պատմություն, գրիմ, երաժշտության տեսություն, սոլֆեջիոն և այլն: Դասընթացն ավարտելուց հետո սովորողները ստացել են Վրաստանի ժողկոմխորհի կողմք այաշտոնավես հաստատված, վոացերեն և ռուսերեն ապագրված՝ «Արբուհի և Լեռն Շազարապետյանների Ոիթմի և պլաստիկայի ինստիտուտի ատեստատ»: Այն իրավունք է տվել աշխատելու որպես Դելսարտ-Շազարապետյան ռիթմապատիկ համակարգի մասնագետ:⁴

Ինստիտուտում գործել է պարի խումբ, որի գեղարվեստական դեկավարն ու ռեժիսոր-բալետմայստերը եղել է Սրբ. Լիսիցյանը: Խումբը 1924-29թթ. համերգներ է տվել Թիֆլիսում,

Բարվում, Երևանում,⁵ Մոսկվայում, Լենինականում, Գերմանիայում (Բեռլին, Մյունիսեն, Ֆրանկֆուրտ):⁶

Ինստիտուտին կից գործել է նաև արևելյան երաժշտական գործիքների անսամբլ հայտնի քամանչահար Ա. Օգանեզաշվիլու դեկավարությամբ, որն ուղեկցել է ազգային պարերի կատարումները:

1924թ. ինստիտուտի պարի խումբը Մոսկվայում 15 համերգ է ունեցել: Մոսկվայի թատրական արվեստի պետական ինստիտուտում և Գեղարվեստական թատրոնում Սրբ. Լիսիցյանը հանդես է եկել նաև Դելսարտ-Շազարապետյան համակարգով տարվող ուսուցման մեթոդի վերաբերյալ գիտական գեկուցումներով, որն ավարտվել է խմբի պարերի ցուցադրմամբ:⁷

Արք. Լիսիցյանի խմբի նվաճումները րարձ են զնահատել Ա. Լունաչարսկին, Վ. Նեմիրովիչ-Դանչենկոն, Ն. Ռախիմանինովը:⁸ Նրան իրավիրել են աշխատելու Մոսկվայի երաժշտական կոմեդիայի թատրոնում, նույնիսկ առաջարկ է եղել ինստիտուտը տեղափոխմել Մոսկվա:⁹

Գերմանիայում խմբի ելույթներն ու նրա ղեկավարի գործումներությունը բարձր է գնահատվել տեղի մտավորականության կողմից¹⁰ (աղ. IX): Խումբը ելույթներ է ունեցել Մյունիսենի «Դեյաշես» (1927թ.), Ֆրանկֆուրտի «Շուման» (1927թ.),¹¹ Բեռլինի «Կարմիր թլուգներ» թատրոնում, «Կ. Ֆեյգե-Շտրաուսբուրգեր» արվեստի դպրոցում (1929թ.) և այլ մշակութային օջախներում (աղ. VIII):

Բեռլինում Արք. Լիսիցյանին իրավիրել են մասնակցելու գերմանական րանվորական

⁵ «Вечер института ритма и пластики», 77 №122, №1, с. 746:

⁶ «Мандат», Тифлис, 15.9.1926, ՀԱԻ, Սրբ. Լիսիցյանի արխիվ:

⁷ «Շ. Վարօսյան, Египетский танец», 21.5.1984, ՀԱԻ, Սրբ. Լիսիցյանի արխիվ:

⁸ «Из отзывов Московских специалистов и прессы», 12.3.1924, ՀԱԻ, Սրբ. Լիսիցյանի արխիվ:

⁹ Հրեա Արք. Լիսիցյան, Պլան моего выступления на вечере по поводу 30-летия деятельности, 1960, ՀԱԻ, Սրբ. Լիսիցյանի արխիվ:

¹⁰ «Отзывы немецкой прессы о выступлении Кавказского ансамбля пляски Лисицян-Азарапетян, выступавшего от имени Наркомпроса ССР Грузии», 1927-1929, ՀԱԻ, Սրբ. Լիսիցյանի արխիվ:

¹¹ «Programm Schumann Theater Frankfurt An Main», 30.1.1927, ՀԱԻ, Սրբ. Լիսիցյանի արխիվ:

¹ Հրեա Արք. Լիսիցյան, Դոկладная записка, Մ., 1939, 16, ՀԱԻ, Սրբ. Լիսիցյանի արխիվ:

² Հրեա Արք. Լիսիցյան, Օ моею дорожом учитеle и друге, ко-торый подарил мне радость познания большого ис-кусства, 9.7.1982, գրանցումը Է. Պետրոսյանի, ՀԱԻ, Պար-արվեստի արխիվ:

³ Հրեա Արք. Լիսիցյան, Ավտобիոգրաֆия, Ե., 28.06.1946, ՀԱԻ, ՀԱԻ, Սրբ. Լիսիցյանի արխիվ:

⁴ «Аттестат», Տիֆլիս, 1925, ՀԱԻ, Սրբ. Լիսիցյանի ար-խիվ:

«Կարմիր թուզներ» (Rote Blusen) պյուխտարական թատրոնի աշխատանքներին: Թատրոնի փորձերին ներկա են եղել Վ.Պիկը և է. Թելմանը:¹ Այնտեղ 1927-28թթ. Սրբ. Լիսիցյանը դասավանել է նաև ոիթմիկա, պլաստիկա, մասնակցել բեմադրական աշխատանքներին: Այդ ամենին գրագիր նա երեխաների հետ պարապունքներ է անցկացրել Բեռլինում գտնվող խորհրդային «Կարմիր աստղ» ակումբում, նաև պարապել է գրադրամներում ու հաճախել ավտորիհացի պարագետ Ռ. Ֆոն Լաբանի շարժման և պարի գրանցման թեմայով դասախոսություններին:²

Պարերի ցուցադրմանը նախորդող գեկուցումներում Սրբ. Լիսիցյանը մանրամասն ներկայացրել է Ֆ. Դելսարտի շարժման տեսությունը, որը հիմնված է «կյանք, բանականություն, հրգի» եռամիասնության վրա: Մարմնի հետ կապված՝ դրան համապատասխանում է «ծայրանդամներ, գլուխ, իրան» միասնությունը, արտահայտման բնականոն, եքսցենտրիկ և կոնցեստրիկ ձևերով:

Դիմք ընդունելով Ֆ. Դելսարտի շարժման տեսությունը՝ նա գործնական մշակմամբ հասնում է: Մարմնի բոլոր մասերի ներդաշնակ շարժմանը, առանձնահաստուկ ընդգծելով պլաստիկ ժեստը:

Դելսարտ-Դազարապեայան համակարգը ցուցադրվել է մշակված ծրագրով:³ Ոիթմիկակային վերաբերվող մասում կարևորվել են հատկապես չափ և ոիթմ հասկացությունները, ոիթիժորության նախապատրաստական ցիկլերը 2/4, 3/4, 4/4, 5/4, 6/4, 7/4 երաժշտական չափերով, իառը և կոմրինացված տակտի տևողության մշակումը:

Դլաստիկային վերաբերվող մասում կարևորվել են սեմիոտիկան (ներքին հոգեվիճակին համապատասխան արտաքին նշաններ), ստատիկան՝ հավասարակշռությունը կարգավորող կանոններ և դինամիկան՝ շարժման և

ներդաշնակության պայմաններ, հակադիր շարժումներ, իմպրովիզացիաներ ու պարեր:

Թիֆիսի ոիթմի ու պլաստիկայի ինստիտուտը գործումներության սկզբնական շրջանում հարել է օիթմալլաստիկ պարի ուղղությանը:⁴ Հետագայում բեմադրվել են նաև արևելյան՝ Եգիպտական պար, Օծ սանձահարողը, Սութրուրա, Օրիենտալ և հայկական պարեր՝ Շուրջպար Ա. Սպենդիարյանի «Անուշ» օպերայից, Ս. Բարխուտարյանի Նազ պարը, Ա. Տիգրանյանի Դեյդարին և այլն:⁵

Մենապարերի լավագույն կատարումներով հանդես են եկել Ն. Լիսիցյանը⁶ (Ա. Սպենդիարյանի Ղայթարմա և Արևելյան պարեր), Թ. Լիսիցյանը (Ֆ. Կրեյսլերի՝ Պչրուիին), Շ. Վարոսյանը (Ա. Տիգրանյանի՝ Դեյդարի), Լ. Գասպարյանը (Ու. Դաշիրեկովի՝ Մութրուրա), Կ. Ալիբեկովան և Լ. Սարգսյանը:⁷

Այդ ինստիտուտում են սովորել և հետագայում հայ պարարվեստի դնագույն աշխատել Ն. Լիսիցյանը (Երևանի պարարվեստի ստուդիա), Թ. Լիսիցյանը,⁸ Շ. Վարոսյանը (Երևանի պարարվեստի ուսումնարան), Ա. Դուրինյանը և Ջ. Սիրունյանը (Երևանի ոիթմի և պլաստիկայի ստուդիա), Վ. Նազարյանը (Ենինական), Ջ. Նիկողոսյանը (Կիրովականի երաժշտական ստուդիա) և այլոք:⁹

Սրբ. Լիսիցյանը նաև գեղարվեստական մարմնամարգության հիմնադիրն է Անդրկովկասում:

1921թ. Վրաստանի ժողկոմխորհի կարգադրությամբ, ինստիտուտի և բժիշկ-ֆիզկուլտուրնիկների մեթոդական հսկողությամբ, Վրաստանի մի շարք դպրոցներում մարմնամարգության դասավանդումը տարվել է ըստ Սրբ. Լիսիցյանի ոիթմալլաստիկ մարմնակրթական համակարգի:

⁴ Ա. Սարգսյան, նշվ. սեղմագիրը, էջ 21:

⁵ «Репертуар института ритма и пластики», ԴԱԻ, Սրբ. Լիսիցյանի արխիվ:

⁶ ««Գուտեատր», 26.11.1924, թիվ ՊՊԿԱ, ֆ. 122, նկ. 1, գ. 769, էջ 136:

⁷ «Թատրոն և արվեստ», Զարյա Վոստոկա, 27.5.1925.

⁸ «Թ. Լիսիցյանի պարի երեկոն Երևանի պետրարունուն», 8.6.1927, Ո. Սպենդիարյան, նշվ. աշխ., էջ 65:

⁹ ««Սպիտակ պատճենահանություն» անձնագիրը, 02.02.1953, ԴԱԻ, Սրբ. Լիսիցյանի արխիվ:

¹ Ա. Սպենդիարյան, Դաշտակ կյանք, բեղմնավոր տարիներ, Երեկոյան Եր., 7.11.1984:

² ««Օտքեռական ամառապատճեն» անձնագիրը, 14.5.1927, ԴԱԻ, Սրբ. Լիսիցյանի արխիվ:

³ ««Կարմիր թուզներ» անձնագիրը, 21.12.1924, ԴԱԻ ՊՊԿԱ, ֆ. 122, նկ. 1, գ. 779, էջ 145:

Մասմագետներն ընդգծել են, որ րացի գեղագիտական արժեքից, պարապմունքները բավականին արդյունավետ են նաև երեխաների առողջության հաճար:

Ի թիվս այլ հայ մտավորականների, Սրբ. Լիսիցյանը նույնպես հրավիրվել է Հայաստան և 1930թ. ստանձնել Երևանի նորաբաց ռիթմի, պլաստիկայի և ֆիգուրալ տուրայի պետական տեխնիկումի դեկավարությունը:¹ Մեկ տարի անց, այդ տեխնիկումի վերակագնավորվել է ռիթմի, պլաստիկայի և պարի ստուդիայի և կանոնավոր գործել 1932 թվականից:²

1936թ. այդ հաստատությունը ստացել է նոր կարգավիճակ և անվանվել Պարարվեստի ուսումնարան, կող յոթնամյա հանրակոթական դպրոցով (Աղյուսակ XXXIX): Մինչև 1938թ. Սրբ. Լիսիցյանը եղել է ուսումնարանի տնօրենն ու ավագ դասատուն:³ Այդ տարիներին է, որ ուսումնարանի սովորողներից կազմվել է ժողովողական պարի երկու խումբ (մեծերի և մանկական),⁴ որոնք ցուցադրել են Շատախի, Սասունի, Ալաշկերտի, Շիրակո, Լոռու և այլ շրջաններին բնորոշ՝ Սրբ. Լիսիցյանի գրանցած և բեմադրած պարերը (աղ. XXXVII): Կատարել են Մամրո, Դընգո, Չոլ մայդան, Յար-Խուշտա, Զիավեն, Լուրեկի, Փափուրի, Ցոլակի, Օյիկ-Մոյիկ, Քըրդան կզի, Կուրկուտիկ, Էկեք ծեծենք սոխն ու սխտոր և այլ պարեր:⁵

Վասպուրական պատմագգագրական շրջանին բնորոշ Լուրեկին խմբական պար է, որը կազմված է աստիճանաբար արագացող երեք մասից: Այդ պարի բեմադրական տարբերակո կատարվել է Երևանի պարարվեստի ուսում-

¹ Ի. Դավթյան, Անձնուրաց նվիրվածություն մուսային և գիտությանը, Հայենիքի ծայն, 28.03.1973, 13/401:

² Ծրբ. Լևսովսկան, Բ Նարկոմուստ Արմենիա, 1932, 7ԱԻ, Սրբ. Լիսիցյանի արխիվ:

³ «Սորեակա», Ե., 26.10.1946, 7ԱԻ, Սրբ. Լիսիցյանի արխիվ:

⁴ Տր գույք պրոֆստուդի րիտմա, ոլլաստի և ոլլաստի, Կոմмунист, 04.07.1935, 152/293. Յարեգագիտական տարբերակո կատարվել է Երևանի պարարվեստի ուսում-

⁵ Ա. Կիլիցյան, Հայ ժողովողական պարարվեստի պատմությունց, Հանրապետական գիտական նստաշրջան նվիրված 1986-88թթ. ազգագույնական և քանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքներին (գեկուցումների հիմնադրությներ), Եր., 1990, էջ 31-32:

նարանի մանկական պարի խմբում Սրբ. Լիսիցյանի բեմադրությամբ: Մասմակիցները կամգնել են մեկ շարքով, ծեռքերը ներքեսում՝ ճկույթներից դունաժ: Բոլոր պարողների ծեռքին եղել է թաշկունակ: Պարաշարքի գերակշռող տեղափոխությունը եղել է դեպի աջ: Պարի առաջին և երկորդ մասերում պարողները ծեռքերը դունել են ճկույթներից, իսկ երրորդում՝ իջեցրել են ներքեւ ու բոնել ափերով: Երրորդ մասում շարքով կամգնած պարողներն ավելի են մոտեցել իրար, որպեսզի արագ տեմպի ընթացքում պարաշարքը չքանդվի (Աղյուսակ XXXV):

Փափուրի պարը Սրբ. Լիսիցյանի մշակմանը նույնպես ինքնատիպ բեմադրական մեկնարանություն է ունեցել: Այն կատարել են տղաներն ու աղջիկները շրջանով մեկումնչ կանգնած, որն աստիճանաբար րացվել է և պարն ավարտվել պարաշարքը պարագլիսի առաջնորդությամբ բեմից դուրս գալով (Աղյուսակ XXXVI):

Սրբ. Լիսիցյանի գրանցած և բեմադրած մանկական պարերի շարքում հատուկ առանձնանում է Էկիք ծեծենք սոխն ու սխտոր մնջախաղային պարը (աղ. XIII): Այն տարածված է եղել Հայաստանի տարբեր պատմագգագրական շրջաններում, հատկապես Վանում, Շատախում, Շիրակում և Զավախսքում: Երկու գնալ մեկ դառնալ պարածենով երեխաներն իրար հարցնում էին. «Ինչո՞վ ծեծենք սոխն ու սխտոր»: Հաջորդ խումբը պատասխանում էր՝ անվանելով ու ցուցադրելով մարմնի այն մասը, որով պետք է ծեծեն (թաթով, կոռունկով, ծնկով, բոունցքով, արմունկով, ճակատով, թթով, կզակով և այլն):

Ըստ Սրբ. Լիսիցյանի՝ այս պարերգը հնում ունեցել է կարևոր ժիսական նշանակություն. այն կատարել են տարեց տղանաբողիկ:

Սրբ. Լիսիցյանի գլխավորած մեծերի խումբը համերգներ է ունեցել Երևանում, Կիրովականում, Դիլիջանում, Լենինականում, մասնակցել Անդրկովկասյան օլիմպիադաներին⁶

⁶ Դ. Դովիաննեսյան, Հայ արվեստի տոնը Թիֆլիսում, Պրոլետար, 17.08.1936, 189-2651: Հայաստան երաժշապերայն և պարի ցուցադրումը Թիֆլիսում, Խ 3, 15.08.1936, 187: Վեчեր արմանական մաստիկայի և ոլլաստի առաջնորդությունը, Կոմмунист, 14.08.1936, 186. Վ. Բոկչավա, Պերվայ վեչեր

(Այսուսակ VI): Մամուլի բուռն արձագանքները վկայում են, որ ստուդիայում տարվող գեղարվեստական աշխատանքները դրված են եղել յուրօ հիմքերի վրա և լիովին բավարարել են ժամանակի պահանջներին:¹

Հաճախակի կազմակերպվող Ելույթները փաստորեն յուրօրինակ արվեստաբանական դասախոսություններ են եղել՝ գործնական նյութի ցուցադրությամբ: Կատարվել են փակ դիտումներ, որոնց մասնակցել են նաև մտավորականության ներկայացուցիչները:² Սրբ. Լիսիցյանը կաընորել է ժողովրդական պարի ուսումնահրությունը, դրանց հավաքումն ու հետազոտությունը, բովանդակության լուսաբանումը:³ Յուրաքանչյուր պարից առաջ նա մեկնաբանություն է տվել դրա ծագման, ծևի, ժամրային հատկանիշների և բովանդակության մասին:

Հայկական ժողովրդական պարերից բացի Արք. Լիսիցյանը բեմադրել է ժամանակի օգոստ համապատասխան քաղաքական ուղղվածությամբ սյուժետային պարեր՝ Կոմինտերն, Պայքար ճեղքվածքների դեմ, Վիրավոր դրոշակակիր, Մուլը և մանգաղ, Գերմանացի պոլիցայը և կոմունիստը, Կեցցե կարմիր Չինաստան և այլն:

Դրանք 1930-ական թվականներին ստեղծված «մասսայական պար» տեսակներից երեք, որոնցում կարևորվում էր մասսայականությունը, թենայի որոշակիությունը, դասակարգային ուղղվածությունը, ֆիզկուլտուրային շարժումների առկայությունը և դրանց դաստիարակչական նշանակությունը: Ֆիզկուլտուրային շարժումը, երաժշտությունն ու երգը քառօչության միջոց էրն համարվում: Ակդ ամենը

народного творчества Советской Армении, Заря Востока, 17.08.1936, 181/3903.

¹ Երևանի պարի պոլիտեխնիկան, Խորհրդային արվեստ (այսու՝ ԽԱ), 15.01.1935, 1 (29), Պարի պոլիտեխնիկի աշխատանքները, ԽԱ, 01.07.1935, 1(40), **Գ. Թռայրան**, Պարարվեստի տեխնիկումը և կադրերի պատրաստման խորհրդ, ԽԱ, 16.10.1935, 19(47), **Ա. Ռուկանյան**, Պալատիկ արվեստ մեզ մոտ, ԽԱ, 29.11.1935, 21-22 (49-50), Արվեստի նոր օօջախ, ԽԱ, 03.01.1935, 3, Երևանի խորոգրաֆիկ ստուդիայի աշակերտների համերգը, ԽԱ, 21.06.1936, 12:

² Արձանագրություն, 09.04.1933, ՀԱԻ, Սրբ. Լիսիցյանի արիթմ:

³ Սրբ. Լիսիցյան. Ատեղենը մեր էպոխային արժանի պարարվեստ, ԽԱ, 1932, 3, էջ 24-25:

երանգավորվում էր րարձը զգացմունքային վերելքով, տոնական տրամադրությամբ և կոլեկտիվիզմի զաղափարով:

Այդիսի պարերից էր «Կոմինտերն»-ը, որը կազմված էր երեք մասից և կատարվում էր երգով ու թմբուկի նվազակցությամբ: Երկու շաբ կանգնած պարողները կատարել են քայլերին բնորոշ շարժումներ՝ քայլք տեղում, առաջ ու ետ, քայլք պտույտով, որի ընթացքում շաբերը կարող երն մոտենալով ու հեռանալով տարբեր անցումներ կատարել: Համապատասխան տակտի վերջում զինվրական ժեստով ողջունել են միմյանց, որը կոչվել է «Ոտտ-Ֆրոնտ»:⁴

Սրբ. Լիսիցյանը բեմադրել է նաև արևելյան ոճի պարեր՝ Արարական, Եգիպտական, Հնդկական, Ռիմանալաստիկ էտյուդներ, Ֆ. Շուրեսի, Է. Գրիգի, Ֆ. Շոպենի, Ֆ. Շայրնի, Ռ. Շումանի երաժշտությամբ՝ երաժշտական պահ, էտյուդ, Մանկական վեճ և հաշտություն, Աշխատանքային գործողություններ և այլն:⁵

Նա աշակերտության ուժերով բեմադրել է երկու բալետ՝ Ժ.Ռամոյի «Զինական լապտերների տոնը» և Ա. Արենսկու «Եգիպտական գիշերներ»: Գրել է նաև Ս.Բարխուդարյանի «Խարինե» և Կ.Զաքարյանի «Պիոներիա» բալետների լիբրետոնները, որոնք, կապված որոշ դժվարությունների հետ, չեն բեմադրվել:⁶

1932-35թթ. պարարվեստի ուսումնաբանի աշխատանքին զուգահեռ Սրբ. Լիսիցյանը եղել է Հայաստանի Լուսժողկոմատին առընթեր նյութական մշակույթի ինստիտուտի գիտաշխատող,⁷ իսկ 1936 թվականից՝ նաև ԽՄԿՍ ԳԱ Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտի կովկասագիտության կարինետի աշխատակից:⁸

⁴ Массовые пляски и игры, М., 1933, с. 24-27.

⁵ «Պարարվեստի, ոիքմի և պլաստիկայի պրոֆստուդիայի քաղաքական-գեղարվեստական խորհրդի կազմն ու ծրագիրը», 03.01.1932, ՀԱԻ, Սրբ. Լիսիցյանի արիթմ:

⁶ Ն. Կիլիչյան, Արք. Լիսիցյանի գործունեությունը դասական պարի շրջանակներում, Ձեկուցում ընթերցված Արք. Լիսիցյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հորելանական նիստում, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ. 1993:

⁷ Ծրբու Լիսիցյան (1893-1979), Некролог, Советская энциклопедия, М., 1980, 2, с. 188-189.

⁸ Ծրբ. Լիսիցյան, Докладная записка, М., 1939, с. 13, ՀԱԻ, Սրբ. Լիսիցյանի արիթմ:

Դեռևս 1924 թվականից նա սկսել և նկարագրական մեթոդով գրանցել է հայկական ժողովրդական պարեր: Մվելի ուշ մասնակցել է գիտարշավերի և օգալի նյութ գրանցել հայ ժողովրդական պարերի ու թատերական ներկայացումների մասին: Դրանցից մեկը, 1932թ. հուլիսին Թալինի շրջանում Հայկական ԽՍՀ նյութական մշակույթի ինստիտուտի բանահյուսության բաժնի կազմակերպած համալիր գիտարշավն է եղել: Այն գլխավորել է բանագետ Կ. Մելիք-Օհանջանյանը, մասնակցել են Սպ. Մելիքյանը, Մրբ. Լիսիցյանը, Շ. Կուժեյյանը, Յաջին Զնդին, Խ. Մուրագուլովը, Յ. Եղիազարյանը, Յ. Մանվելյանը և Վ. Աբրահամյանը:¹

Գիտարշավը նպատակ է ունեցել ոչ միայն մանրամասն ուսումնասիրել Թալինի շրջանում վերաբնակված սասունցիների և տեղացիների ազգագրությունն ու ժողովրդական բանահյուսությունը, այլև հայտնաբերել, չափագրել ու լուսանկարել նյութական մշակույթի հուշարձանները: Այդպիսի համալիր գիտարշավ հայ իրականության մեջ կազմակերպել է առաջին անգամ:

Մրբ. Լիսիցյանը Թալինի շրջանի Թալին, Միջնաձոր, Իրինդ, Ներքին Բագմաբերդ, Աշճակ և այլ գյուղերում գրանցել է: Չուրջ 70 ժողովրդական պար:²Պարեղանակները նույագրել է կոմպոզիտոր-երաժշտագետ Սպ. Մելիքյանը: Այդ պարերի թվում են Սաքման, Լոռկեն, Տեղական քոչարին, Քրդական գյուղնոր, Մշո քոչարին, Թոլակին, Ֆորկան, Վերկերը, Յա Մայրամեն, Ցար-խուշտան, Գորանին, Բատոլան, Ռոմանին, Ալագյոգին և այլն:³

Յաջորդ խոչըր գիտարշավը կազմակերպվել է 1936թ., Հայկական ԽՍՀ ժողկոմխորհին առընթեր Արվեստի գործիչների վարչության կողմից՝ Գեղարքունիքուն, որի ժամանակ նա գրանցել է հայկական և քրդական ժողովրդական պարեր:

¹ Յողվածներ, հուշեր, նամակներ, փաստաթղթեր (Սպ. Մելիքյանի վերաբերյալ), Եր., 1964, էջ 89:

² Срб.Лисиւиан, նշվ. աշխ., հ. 1, էջ 477-478:

³ Սպ. Մելիքյան, Հայ ժողովրդական երգեր ու պարեր, Եր., 1949, էջ 141-159:

Իր ուսումնասիրություններում ազգագրագետ Մրբ. Լիսիցյանը գիտական խոր վերլուծությամբ ու մասնագիտական բարձր մակարդակով հիմնավորում է պարի գրանցման եղանակները և պարողների հետ տարվող աշխատանքի սկզբունքները:⁴ Նա նշում է, որ պարի գրանցումն, ի տարբերություն երաժշտական կամ բանահյուսական նյութի, ունի սիսյն իրեն բնորոշ առանձնահատկություններ: Մասնավորապես՝ անցյալում պարեր չեն գրանցվել, բնագավառն ուսումնասիրված չեն, ինչպես երաժշտությունն ու կերպարվեստը, նախկինում կազմված հարցարանները⁵ լիարկարժեք չեն ներկայացնում հարցերի այն ամբողջությունը, որը վերաբերվում է ժողովրդական պարերի ու թատերական գործողությունների գրանցմանը, դեռևս մասնագիտական մոտեցում չի մշակվել խնդրի նկատմամբ:

Մանրամասն ներկայացնելով պարանյութի գրանցման հիմնական և երկրորդական պայմանները, Մրբ. Լիսիցյանը կազմում է ոչ միայն պարային և թատերական գործողությունների երաժշտական նվազակցության և բանասացների համար: Վերջիններիս դերն առանձնապես կարևորվում է որպես նյութի գրանցման սկզբնադրյուր, հաշվի առնելով նրանց կենսագրությունը, անհատականությունը, հաղորդած տեղեկությունների ճգրտությունն ու հավաստիությունը:

Ազգագրագետ Մրբ. Լիսիցյանը կարևորում է նյութի հավաքման մասնագիտական մոտեցումը, քանի որ ստույգ գրանցման հետ է կապված պարի ծնի ու բովանդակության գիտական վերլուծությունը:⁶

⁴ Այս հարցին նվիրված Մրբ. Լիսիցյանն ունի առանձին աշխատավորուն (Срб.Лисиւиан, Կաк собирать и записывать народные плетки, М.-Լ., 1941, с. 64.), որը հրատարակության է պատրաստվել 1941թ., բայց պատերազմի պատճառով չի տպագրվել, պահպանվում է որ արխիվում:

⁵ Սպ. Լիսիցյան, Ազգագրական հարցարան, Եր., 1946, էջ 105:

⁶ Срб. Лисиւиан, նշվ. աշխ., հ. 1, էջ 8:

Շարժման գրանցման ճշգրիտ ու միասնական համակարգի հարցը միշտ էլ հետաքրքրել է այդ իմղրի ուսումնահրությամբ գրաղվող մասնագետներին: Այն հին պատճություն ունի. առաջին հիշատակությունը վերաբերում է XV դարին: Դա U.Ավստրիացու (1489-1530) գրած «Բասդանսերի Բրյուսելան կողեքսն» է,¹ որը ներառում է ոսկով և արծաթով սև թղթի վրա գրված 59 պար: Այդ ծեռագրում մեղեդոյ յուրաքանչյուր նոտայի տակ գրված են եղել պարագայերի սկզբական տառերը, որոնցից ամեն մեկը կատարվում է մեկ նոտայի նվազակցությամբ:²

Շարժման գրանցման համակարգեր ստեղծվել են նաև հաջորդ դարերում: XV-XX դարերում այդ հարցում առաջնությունը պատկանել է Ֆրանսիային (Տուանո Արրոյի, Շառլ Լուի Բոշանի, Ռաուլ Ֆերե Ռամոյի, Արբուր Սեն-Լեոնի համակարգերը):³ XIX դարի վերջերին, կապված ուսական բալետի գարգացման հետ, շարժման գրանցման համակարգեր ստեղծվել են նաև Ռուսաստանում:⁴ Դրանք նոտագծային և գրաֆիկական համակարգեր են, որոնցից առաջնը տարածում չի գտնել, իսկ ըստ Վ. Ստեպանովի համակարգի՝ 1890-ական թվականներին ուսական բալետմայստեր Ա. Գորսկին գրանցել է Պ. Զայկովսկու «Կարաաի լիճը» (ռեմ.՝ Մ. Պետիպա) և «Կյորինդա» (ռեմ.՝ Ա. Գորսկի) բալետները:⁵

XX դարի 20-ական թվականներին ստեղծվեց Ռ.Ֆոն Լարանի շարժման գրանցման համակարգը, որը արագորեն տարածվեց Եվրոպայում և Ամերիկայում: 1940թ. այդ ուղղության հետևորդները Սյու Յորքում հիմնեցին պարի

գրանցման րյուրո: ⁶ Անգլիայում մինչև օրս էլ կազմակերպվում են Լարանի համակարգով շարժման վերլուծման և գրանցման դասընթացներ, շարումնակելով այդ համակարգի գարգացումը:⁷

1950-ական թթ. Եվրոպայում ստեղծվում է մեկ այլ համակարգ, որի հիմքում շարժման գրանցման գրաֆիկական սկզբունքն էր, որը կատարվում էր երաժշտական նոտաների հինգ գծերի վրա արվող նշաններով:⁸ Յեղինակներն են անգլիացի նկարիչ Ո.Բենեշը և նրա կինը՝ Զ.Բենեշը: 1962թ. նրանք Լոնդոնում հիմնում են պարաբանության (խորեոգիա) ինստիտուտ, որտեղ պատրաստվում են պար գրանցող մասնագետներ: 1973թ. ԱԱՆում րացվում է այդ ինստիտուտի մասնաճյուղը: Բենեշի համակարգով մինչև օրս էլ գրանցվում են րայետներ և պարային համարներ:⁹

Շարժման գրանցման միասնական համակարգ ունենալու հարցը րազմից է քննարկվել տարրեր գիտաժողովներում և մասնագիտական խորհրդակցություններում,¹⁰ սակայն որոշակի և վերջնական լուծում չի ստացել:

Որոշ մասնագետներ այն կարծիքին են, որ գեղադասելի է օգտագործել գրանցման նկարագրական մեթոդը, երբ երաժշտության յուրաքանչյուր տակտին համապատասխան նկարագրվում է պարային շարժումը:¹¹ Այդ մեթոդը XX դարի 50-ական թվականներին գրանցվեցին շատ ժողովրդական պարեր, որի նախաձեռնողներից էին նաև Ե.Ս.Մարգոլիսը¹² և Տ.Ա.Տկաչենկոն:¹³ Նրանք հրատարակեցին մի շարք գրքեր:¹⁴

⁶ R.Lange, Kinetografy Laban (Movement notation) and the folk dance research in Poland, Wrocław, 1966, p 390-391.

⁷ Dance Studies, Edited by R. Lange, Jersey, 1991, p. 141.

⁸ An Introduction to Benesh Movement-Notation: Dance, London, 1996, pp. 55-57.

⁹ H.Рославлева, Бенеш Рудольф, БЭ, М., 1981, с. 68.

¹⁰ Բալետի վերաբերյալ խորհրդակցություն, Մ., 1936. Սարդարանների և ազգագրագետների 7-րդ միջազգային կոնգրես, Մ., 1964:

¹¹ Л.Ошурко, Народные танцы Молдавии, Кишинев, 1967, с. 16-26. Г.Настюков, Народный танец на сценах, М., 1976, с. 50-51.

¹² Е.Марголис, О записи танца, М., 1950, с. 10-12.

¹³ Т.Ткаченко, Народный танец, М., 1967, с. 100-110.

¹⁴ Т.Устинова, Русские танцы, М., 1955.

¹ Բասդանսեր. առանց ցատկի, պարտերային պարեր. Н.Ивановский, Балльный танец 16-19вв. Л.-М., 1948, с. 11-13.

² Срб.Лисициан, Запись движения (Кинетография), М.-Л., 1940, с. 11-15.

³ В.Красовская, Западноевропейский балетный театр, Л., 1979, с. 118.

⁴ Այդ բնագավառի հիմնական աշխատություններն են եղել Ա.Թորոնի «Грамматика танцевального искусства и танцовиси или хореографии, с хореографическим атласом и отдельными сборниками нот», Одесса, 1890. В.И.Степанов, Хореография.

⁵ В.Красовская, Русский балет начало 20 века, М., 1971, с. 115.

Արք. Լիսիցյանը տարիներ շարունակ հանգամանորեն ուսումնասիրել է շարժման գրանցման համակարգերը: Նրա երկարատև ու քրտնաջան պայտումների արդյունքներն ամփոփվել են մի հիմնարար աշխատությամբ, որը լույս է տեսել 1940թ. Մոսկվայում՝ «Շարժման գրանցում» (կիմնետօգրաֆիա) վերնագրով, որի համար նրան շնորհվել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:¹

«Շարժման գրանցում» աշխատությունը համարվում է լավագույններից մեկը այդ բնագավառում: Այն ունի գիտական և պատմական մեծ նշանակություն, քանի որ ներկայացվում ու նկարագրվում են Եվրոպայում ստեղծված բոլոր համակարգերը, XV դարից մինչև XX դարի 40-ական թվականները: Գրքի երկրորդ մասը Արք. Լիսիցյանի ստեղծած բուն համակարգն է, ներառյալ հարուստ մատենագիտությունը (հիմնականում ֆրանսերեն, գերմաներեն ու անգլերեն) և գծանկարները:

Նրա ստեղծած համակարգը հնարավորություն է ընծեռում ճշտորեն գրանցել ոչ միայն պարը, այլև շարժումն ընդիհանրապես: Ըստ ձևի՝ նա շարժումը բնութագրում է ուղղությամբ, դիալագոնով, մկանային լարվածությամբ, տեմպով, սահունությամբ և շեշտադրությամբ, իսկ ըստ ինաստի՝ բաժանում է կենցաղային, աշխատանքային, արտահայտիչ, նմանողական, նկարագրական, խորհրդանշական և այլ խմբերի:²

Արք. Լիսիցյանի «Շարժման գրանցում» աշխատությունը գգալի առաջընթաց էր շարժման ուսումնասիրության բնագավառում:³ Նոր համակարգը նախորդների համեմատ ուներ մի շարք ակնառու առավելություններ. ընդամենը 32 նշան, գրանցման պարզություն, կապված թե նշանների մատչելիության, թե գրառման ուղղության (ձախից աջ) հետ: Ըստ այդ համակարգի՝ գրառվում է ոչ միայն շարժումը, այլև մկանային լարվածության աստիճանը և

դիմախաղը: Այս ամենը գրանցվում է վանդակավոր թղթի վոա, չափանիշ ընդունելով տարածության մեջ եթեք հիմնական պարամետր՝ երկարություն, լայնություն և բարձրություն: Մարմնի դիրքերի պատկերումը ծավալային է, ծիշտ նշելով շարժման անկյունները: Մանրամասն նշվում են նաև գլխի, ուսերի, ծեռքերի, դաստակների, իրանի դիքերը: Երաժշտությամբ ուղեկցվող շարժումը գըանցվում է նոտաների տակ, իսկ բառերով ուղեկցվողը՝ տեքստի:

Արք. Լիսիցյանի կողմից շարժումների գըանցման գիտական մեթոդի մշակումը հնարավորություն տվեց ոչ միայն գրառել, այևս մեծ աշխատանք կատարել ժողովողական պարերի ու թատերական ներկայացումների շարժումների ու կառուցվածքի վերլուծման ուղղությամբ:⁴ Պատահական չե, որ շատ մասմասնագետներ են ուսումնասիրում նրա մեթոդն ու գրանցման համակարգը:⁵ Ըստ այդ այդ համակարգի, Խորհրդային Միությունում գըանցվել են բալետային և օպերային ներկայացումների արժեքավոր հատվածներ: Այդ մեթոդի կողառնամբ այլազգի պարագետների կողմից հրատարակվել են մի շարք գրքեր:⁶

Դայ պարային մշակույթի համար նշանակալի է սյուն փաստը, որ Արք. Լիսիցյանի ստեղծած գիտական գրանցման միջոցով մոռացումից փրկվել ու պահպանվել է շուրջ 2000 ժողովողական պար և թատերական ներկայացում:⁷

1942-1959թ. Արք. Լիսիցյանն աշխատել է ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորում և միաժամանակ դասա-

¹ Է. Պետրոսյան, Ջ. Խաչատրյան, Արմանական արարական պարագաներ, Երևան, 1980.

² Մ. Շահներյան, Վուշտում արվեստ, 1941, 2-3, էջ 103-104:

³ Նման բաժանում բնորոշ է նաև «Բնմական շարժման» տեսությանը: Տես Ի. Կոխ, Օգոստուս 1976, ս. 9-12.

⁴ Ե. Պետրոսյան, Նաւազական շարժումների լեզուն, Երևան, 1988, էջ 100:

⁵ Ե. Պետրոսյան, Նաւազական շարժումների լեզուն, Երևան, 1988, էջ 100:

վանդել գեղարվեստա-թատերական ինստիտուտում: Յայ դերասանների ու թատերագետների մի քանի սերունդ է անցել ոհթմիկայի, բեմական շարժման ու հայ ժողովրդական պարի նրա դասընթացները:

1959 թվականից Սրբ. Լիսիցյանն աշխատել է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության նորարաց ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: Իր եռանդուն գիտական և մանկավարժական գործունեության համար նա արժանացել է ՀՍՍՀ Գիտության վաստակավոր գործչի կոչման (1964թ.), իսկ ծննդյան 80-ամյակի առթիվ՝ պարգևատրվել «Պատվո նշան» շքանշանով (1982թ.):

Վախճանվել 1979թ. Երևանում:

Վաստակաշատ գիտնականի տարիների քրտնաջան աշխատանքի արդյունքներն ամփոփվել են «Յայ ժողովրդական հիմնավուրց պարերն ու թատերական ներկայացումները» մենագրության առաջին (1958թ.) և Երկրորդ (1972թ.) հատորներում:¹ Այս աշխատության համար նրան շնորհվել է պատմական գիտությունների ղոկտորի գիտական աստիճան: 1983թ. հրատարակվել է նրա «Յայկական հիմնավուրց պարերը» գիրքը (ոռուսերեն): Կան նաև մինչև օրս անտիպ մի քանի աշխատություններ՝ «Ժողովրդական պարի պրոբլեմները մեր օրերում», «Արասապելաբանական տոհմական այլուսակներ հունական, հռոմեական և հայկական առասպելաբանությունից», «2500 հայ ժողովրդական պարերի և թատերական ներկայացումների գրանցման հավաքածու», «Շատախի հարսանիք» և սյյլն.²

Իր ծավալուն ուսումնասիրություններում նա վերլուծել է հայ ժողովրդական պարերն ու թատերական ներկայացումներն ըստ Յայատանի առանձին պատմագգագրական շրջանների, դրանց ծագումնաբանությունը, առնչությունը տոնա-ծիսական համակարգի հետ, բացահայտելով պարերի ժամանակակից հատկանիշներն ու ավանդականությունը, նշանակությունն ու բովանդակությունը:

Սրբ. Լիսիցյանը, Երկարամյա գիտական աշխատանքի արդյունքում հանգում է այս եգորակացության, որ մինչ այժմ գրանցված պարերի հիման վրա դժվար է վերջնական և հիմնավոր դասակարգում կատարել: Դա անելու համար անհրաժեշտ է ունենալ Արևմտյան և Արևելյան Յայաստանի բոլոր պատմագգագրական շրջանների գրանցված պարերը և հայ պարարվեստի մշակված պատմություն:³

Նա դասակարգել է հայկական ժողովրդական պարերը՝ կիրառելով դրանց վերլուծության նոր մեթոդ, որը տարվում է սերտորեն առնչվող մի քանի ուղղություններով:

Նախապես նյութը բաժանվում է հիմնական և օժանդակ բաղադրամասերի:⁴ Յիմնական բաղադրամասերի մեջ մտնում են շարժական, Երաժշտական, խոսքսյին տեքստերը և գեղարվեստական ձևավորումը:

Խմբական պարի շարժական տեքստում քննվում է ոչ միայն խմբի տեղաշարժումը, այլև յուրաքանչյուր կատարողինը առանձին: Այն վերլուծվում է ըստ ծեփի ու բովանդակության, փոխաղաքած դասավորությունների և վերադասավորությունների, ժամանակի և գործողության յուրաքանչյուր միավորում, որոնք նույնական կարող են առանձնահատկություններ ունենալ:

Մարմնի ամեն մի մասի շարժումը կարող է կատարվել առանձին կամ դրանց համատեղ մասնակցությամբ: Շարժումները Ենթարկվում են ներդաշնակության օրինաչափություններին, ունեն Ելակետային դիրք, ընթացք ու ավարտ:

Ուշագրավ է լիսիցյանական դպրոցին հատուկ, հորդողնական հարթության վրա պարողների թողած շարժման հետագի տեսությունը, ըստ որի՝ այն ունի ավարտուն պատկեր և արտահայտում է որոշակի իմաստ՝ կապված պարի բովանդակության հետ: Պարողները շարժվելով հարթության վրա, թողնում են հետագծեր, որոնք կարող են ընկալվել որպես որոշակի գարդանախշ, պարի

³ Հ. Կարդուսյան, Ազգագրություն, Պատմա-քանասիրական հանդես, 1970, 4 (51).

⁴ Հ. Լիսիցյան (1893-1979), Նեկрոլոգ, Советская этнография, М., 1980.

պլան, վերածվելով ինքնասիհա պարային գրանցման: Սրբ. Լիսիցյանն այդ զարդանախշը նույկիսկ կապում է արևի ու լուսնի պաշտամունքի և երկիագործական աշխատանքների շրջափուլերի հետ:

Պարերի, դրանց ուղեկցող երաժշտական և խոսքային տեքստերին վերաբերվող գլուխութերն ամբողջական ուսումնասիրություններ են, նվիրված հայկական ժողովողական երաժշտության ու րանահյուսությանը:

Երաժշտական տեքստը նա բաժանում է վոկալ, գործիքային և ռիթմիկ-աղմկային մասերի, ներկայացնում և վերլուծում առանձին:

Սրբ. Լիսիցյանի համահավաք ու բազմակողմանի ուսումնասիրության մաս է կազմում պարերի գեղարվեստական ծևավորման նկարագրությունը, որում նա ներառում է կատարման վայրի ծևավորումը, իրադրությունը, պարողների ունեցած պարագաները, տարագը, գրիմը, դիմակները, երաժշտական գործիքները և այլն: Այդ ամենը լրացվում ու ամբողջացվում է հարուստ պատկերագրական նյութով:

Պարերի վերլուծման պատկերարանական մեթոդը լիսիցյանական դպրոցի հիմնական ուղղություններից է:¹ Նրա ուսումնասիրությունները նաև պատկերագրական եզակի հավաքածուներ են, որոնցում ի մի են բերված հնագույն շրջանի որմնանկարչությունը, սափորանկարչությունը, քանդակագործությունը, միջնադարյան մանրանկացությունը, գեղանկարչությունը, լուսանկարչությունը և այլն, այսինքն այն ողջ փաստացի նյութը, որը կարող է տվյալներ տալ պարագեստի վերաբերյալ:

Քանի որ պարը տարածաժամանակային աղվեստ է, դրա պատկերագրությունը հատկապես կարևոր նյութ է: Պարի պատկերագրության ուսումնասիրման նպատակն է տարբեր ժամանակաշրջանների արվեստի գործերի միջոցով վերականգնել պարային մշակիւթի պատկերը:²

¹ Iconography and Iconology, Encyclopedia of World Art, 8, 1963, New York, pp. 769-786.

² T.Seebass, Musical Iconography, Musicology, New York, 1990, p. 15-18.

Պատկերաբանությունը, որը պատկերագրության նկարագրական մակարդակի շարունակությունն է, ենթադրում է տվյալների համադրման և վերլուծման մի մեթոդ, ըստ որի հնարավոր է դառնում անցյալի մշակույթի մասնակի, երբեմն լիակատար վերականգնումը:³

Արվեստի ստեղծագործությունների ուսումնասիրման պատկերաբանական մեթոդը ծևավորվել է դեռև XIX դարի երկիրորդ կեսին և ունեցել շատ հետևողաբար: Սըբ. Լիսիցյանը պարի պատկերաբանական մեթոդի հիմնադիրն է հայ պարարվեստարանության մեջ:⁴ Ուսական արվեստագիտության մեջ հայտնի է արվեստաբան L. Բլոկի պատկերագրական վերլուծական մեթոդը, որն իր աշխատություններում այդ կերպ բացահայտում է դասական պարի ծագման ու գարգացման մի շարք հաջցերը:⁵

Պատկերագրությունից բացի, պարանյութի հիմնական վերլուծումները լրացնում են օժանդակ բաղադրամասերը, այն է՝ պատմական, աշխարհագրական, ազգագրական, լեզվաբանական տվյալներ, րանահյուսական նյութեր, երաժշտական, պարային և թատերական բառեզրեր և այլն:

Այս ամենը Սրբ. Լիսիցյանը դիտարկում է հայ ժողովրդի ծագումնաբանության համատեքստում: Քննարկվում են ոչ միայն պատմական, ազգագրական, աշխարհագրական տվյալները, այլև տրվում են լեզվաբանական լուրջ վերլուծությունները, դրանցով, ըստ Էռյան հիմնավորելով ներկայացված վարկածները: Գիտական վերլուծության հիմք են ծառայել նաև Սրբ. Լիսիցյանի օգտագործած հայերեն և օտար լեզուներով բառարանները՝ հին հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, լեհերեն, թուրքերեն և այլն:

³ E.Panofsky, Iconography and Iconology: An Introduction to the Study of Renaissance Art, Studies in Iconology, New York, 1939.

⁴ Այդ մեթոդը է աշխատում ՀՀ ԳԱԱ ՀԱԻ պարարվեստի խումբը, որն անդամակցում է ավանդական երաժշտության միջազգային խորհրդի (ICTM) երաժշտական և պարի պատկերագրության խմբերին:

⁵ Պ. Բլոկ, Классический танец, история и современность, М., 1987, с. 46-50.

Սրբ. Լիսիցյանի «Դայ ժողովրդի հինավուրց պարերն ու թատերական ներկայացումները» մենագրության «Դայ ժողովրդի պարային և թատերական մի քանի տերմիններ» գլուխը, որտեղ շատ բառեր ու բարբառային դարձվածքներ առաջին անգամ են ներկայացվում, կարող է օգտագործվել որպես բառարան:

Պարերի վերլուծումն ու դասակարգումը Սրբ. Լիսիցյանը սկսում է տերմինների վերլուծությունից:

Խաղ և պար բառերի համադրական վերլուծությունները մեկնարանում են, որ խաղ նշանակում է մարմնի մաս (սցենա): Շարժումը և պարը կատարվում են մարմնի մասերի՝ իւսդերի միջոցով: Դետևաբար խաղ, խաղալ նշանակում է նաև պարել: Խաղ գոյականի բազմիմաստությունն ընդգծում է պարային և խաղային գործողության սինթետիկ բնույթը (խաղ կանչել, խաղի տեղ, խաղարան, խաղացող, խաղապետ և այլն), որտեղ տեղ ունեն երգը, պարը, պարերգը, պարատեղը, պարողը, պարի դեկավարը և այլն:¹

Թղթոնցի բառեգրի հիմքը նա համարում է: «թիո»-ը, կապելով թոշուն բարի հետ: Այդ արմատով կազմված բոլոր բառերը կապվում են թոփքի, գետնից կտրվելու, պոկվելու ու դրանց հետ կապված շարժումների հետ:

Թոփքների առկայություն է ենթադրում նաև «Վեր-վեր» անվանումը: Ժողովրդական խոսելածում «Վեր-վեր ընկնել» նշանակում է թոնել, վեր թոշել, ցատկել, նաև՝ ուրախանալ, ուրախությունից թոշկոտել, պարել և այլն: Զուգահեռ վերլուծվում են կայթել, խայտալ, ցատկոտել, ոստոստել տերմինները:

Ոստ նշանակում է ճյուղ, շարունակություն, աճ, և ոստոստել, այսինքն՝ թոշկոտել, աճել, ընծյուղվել բնից կամ այլ ճյուղից, և ոստյուն՝ թոփք երկու ոտքով, թոշկոտում: Ակնհայտ է այս տերմինների և ծիսական-նմանողական շարժումների կապը պարում:² Թոփքներով կատարվող ծիսական պարերը կատարվել են բույսերի, կենդանիների, հողի արգասավորությանը նպաստելու նպատակով, քանի որ

ընկալվել են նաև վեր բարձրանալ, հասակ առնել իմաստներով:³ Դավատացել են, որ բարձր թոփքները նպաստել են պտղաբերությանը:⁴ Թոփքածն շարժումը, ոստյունը, ոստոստումը սկսվում է մայր հողից, առնչվում նրա պտղաբեր ուժի հետ:⁵ Մեծ մայր աստվածությունը պաշտամունքը Սրբ. Լիսիցյանը նույնականում է Վեր-վերի տեսակի «թղթոնցի» պարերի հետ:⁶

Վեր-վերի տեսակի պարերն ու պարերգերը տարածված են եղել Դայաստանի րոլոր պատմագգարական շրջաններում: Դրանց հիմքում «Երկու գնալ-մեկ դառնալ» պարածեն է՝ Վեր-վերի, Վեր-վեր կամ Վերվերով անվանումներով: Թոփքներով կատարվող, հիմնականում մաժորային տրամադրությամբ պարերը հայերենում հայտնի են նաև թղթոնցի, թղթոնքի, թղթան, թղթվուն, թղթվերի և այլ ծևերով: Դրանք թօչկոտելով, թոփքանման շարժումներով, ցատկոտելով պարեր են, որոնք կարելի է համեմատել ոուսական, չեխական, բելոռուսական թոփքներով պարատեսակների հետ (Ըստու):⁷ Չեխիայում այդայդայիսի պարերի կատարման մասին տվյալներ կան դեռևս 14-րդ դարից:⁸ Թոփքածն պարերը տարածված են նաև Ռուսաստանում, Բուլղարիայում, Մորավիայում, Սլովակիայում, Խուալիայում, Խսպանիայում և այլուր:⁹

Պարի վերլուծման և դասակարգման համար Սրբ. Լիսիցյանը հիմք է վերցնում պարի նախնական տարբերակը (ինքանակ): Բանագիտության մեջ այդ հարցը քննվել է մի շարք հեղինակների կողմից (Մ.Արենյան, Վ.Պրոպագ, Պ. Բոգատիշվիլի և ուրիշներ):¹⁰ Դայ պարարվեստում պարի հիմնական տարբե-

³ **Պ.Բոգատիշվիլի**, Вопросы теории народного искусства, М., 1971, с. 428.

⁴ **Քենսություն**, Բուլղարական կամ Դայ գաւառ, Թիֆլիս, 1901, էջ 60-61:

⁵ **Է.Կորուսովա**, Ранние формы танца, Кишинев, 1977, с. 98.

⁶ **Ծը.Լիսիցյան**, Старинные армянские пляски, Е., 1983, с. 11-14.

⁷ **Պ.Ալեքսյոսի**, Белорусская народная полька, М., 1995, с. 7-9.

⁸ **Պ.Բոգատիշվիլի**, Աշխ. աշխ., էջ 428:

⁹ **Ե.Վասիլյան**, Տանը, Մ., 1968, с. 221.

¹⁰ **Մ.Արենյան**, Ժողովրդական խաղիկներ, Եր., 1940, էջ 176-177:

¹ **Ծը.Լիսիցյան**, Աշխ. աշխ., հ. 1, էջ 61-62:

² Նույն տեղում, էջ 263-267:

րակի և հետևագա ծևերի վերլուծման մեթոդը մշակել է Սրբ. Լիսիցյանը:¹

Վեր-վերի պարի հիմնական աարբերակը կատարվում է շրջանով, ձեռքերը՝ ուս ուսի: Պարը կազմված է չորս մասից: Թռիչքները կատարվում է երկու գմալ-մեկ դառնալ պարաձևով, շրջանի դեպի աջ կատարվող ընդհանուր տեղափոխությամբ և ոտքերի շարժումների վեց միավոր հաշվով:

Պարի պլասկի աստիճական բարդացումը ի հայտ է բերում աարբերակների զարգացման պատկերը: Մանրամասնորեն նկարագրվում և վերլուծվում են թալինի, Ալաշկերտի, Խաստուրի, Վանի, Ապարանի նմանատիպ պարերի գալարուն պլանները հորիզոնական հարթության վոա յուրաքանչյուրին համապատասխան՝ ոտնաթաթերի, ծնկների շարժման և իրանի թեքումների ռիթմային պատկերով:

Սրբ. Լիսիցյանն առանձին վերլուծել է նաև Վեր-վերի պարի տարբերակեերը, դրանք համեմատելով հիմնական տարբերակի հետ:² Դրանք բոլորը կատարվում են ընդհանուր աջ տեղափոխությամբ և ըստ ոտքերի շարժման հաշվի՝ բաժանվում խմբերի. 10 և 14, 20-42, 34, կարծ պարաձև, կազմված հիմնական պարաձևի վերջին չորս շարժումներից, «Երեք գնալ, երկիւ տեղում» պարաձևի հիման վրա:

Վեր-վերի տեսակի պարերը վերլուծելիս, Սրբ. Լիսիցյանն առանձնահատուկ կանգ է առնում այդ պարատեսակի այն տարբերակների վոա, որոնցում թռիչքները համադրվում են օձաձև սահող շարժումների հետ: Ալդպիսի շարժումներ կատարվում են Վեր-վերի տեսակի որոշ պարերի սկզբում, որոնք նախորդում են այդ պարին բնորոշ թռիչքային շարժումներին: Օձի նմանությունը միշտ ընդգծում է հոդի առկայությունն ու դրա գերբնական ուժը: Տվյալ դեպքում Վեր-վերի տեսակի թռիչքաձև պարերի որոշ տարբերակներում օձանման սողացող շարժումների գուգորդումը թռիչքների հետ նա կապում է պտղաբերության հետ:

Սահող շարժումները, որոնք նույնական ծեսի մնացուկ, օձի, որպես ընտանիքի բարի ոգու, հաջողության ու արգասավորության խորհրդանիշ են:³

Ըստ Սրբ. Լիսիցյանի՝ պարերը դասակարգվում են ըստ ժողովողական մտածելակերպի և աշխարհայացքի՝ հիմք ունենալով ծեսն ու ծիսական պարը:

Որպես օրինակ, Սրբ. Լիսիցյանը հաճախ համեմատություններ է անում այլ ժողովուրդների ազգագրական նյութի, նաև աֆրիկյան և ավստրալական որոշ ցեղերի դեռևս տոհմատիրական շրջանում գտնվող նյութական և հոգևոր մշակույթի հետ: Այդ ցեղերը զանազան ծիսական արարողությունների ժամանակ կատարել են հմայական և նմանողական բնույթի պարեր:⁴ Ավանդաբար փոխանցվող պարի արվեստը նրանց համար դեռևս կենսած է, աշխարհընկալման ու արտահայտման ինքնատիպ միջոց:⁵

Սրբ. Լիսիցյանն իր ուսումնասիրություններում հայկական ժողովողական պարերը դասակարգվում է ըստ պարզության և բարդության:

Հայկական ժողովողական պարերի կառուցկածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց առանձին մասերը կազմված են նույն պարաձևի որոշակի քանակով կրկեռություններից: Պարզ պարաձևները կազմված են մեկ պարային ֆրագից՝ ներառելով մեկ կամ մի քանի պարաքայլ, իսկ բարդ պարաձևները՝ մի քանիսից: Բարդ պարային պարբերությունն իր հերթին կարող է կազմված լինել մի քանի պարաքայլից:

Ելնելով պար, պարբերություն, դաս, դասություն բառերի ստուգաբանությունից, Սրբ. Լիսիցյանը եզրակացնում է, որ պարային պարբերություն անվանումը միանգամայն համընկնում է որոշակի քանակի պարաքայլերի հետ, որոնք միավորվելով՝ կազմում են մեկ

³ Срб.Лисициан, նշվ. աշխ., հ. 1, էջ 333-358:

⁴ Ա.Դրիձո, Լ.Սինց. Մարդիկ և սովորություններ, Եր., 1987, էջ 37-39:

⁵ С.Бычков, Изумрудное оперение Гаруды, М., 1987, с. 177-186.

¹ Այդ մեթոդը է աշխատել նաև ուս պարագան Գ. Գոլեզյանին:

² Срб.Лисициан, նշվ. աշխ., հ. 2, էջ 137-171:

ամբողջ շարժական պարբերություն, ավարտուն միաց:¹

Պարերի նման բաժանումը նա կապում է դրանց տեմպի հետ: Շատ դանդաղ պարերը ժողովուրդն անվանում է «ծանր», իսկ արագ տեմպով, թոփքները՝ «թեթև»: Այդպիսի պարերի տեմպը կատարման ընթացքում փոքրինչ արագանում է, առանց շարժման փոփոխության: Պարերը կազմված են լինում երկու և ավելի մասերից, որոնցից առաջինը կատարվում է դանդաղ, իսկ մնացածները՝ արագ (թեթև):

Մի քանի մասից կազմված պարերի ամեն մի մասում շարժումները փոխվում են, դառնալով թոփքներ:

Հայկական Դուզ կամ Շիտակ պարերը կազմված են մեկ, երկու կամ երեք մասից: Մեկ մաս ունեցող պարը կազմված է միայն երկու կրկնվող քայլից: Երկու մաս ունեցող պարի երկրորդ մասը թռնոցի է, կազմված տարրեր ցատկերից: Պարը համարվում է երեք մասանի, եթե երրորդ մասում տեղի է ունենում թոփքների զարգացում, մասնավորապես՝ տեղում ճոճվելով մի ոտքից մյուսը և շարժվելով դեպի աջ:

Հայկական ժողովուրդական պարերի հաջորդ դասակարգումը արվում է ըստ պարագայլերի («երկու գնալ-մեկ դառնալ», «երկու գնալ-երկու դառնալ», «երեք գնալ-մեկ դառնալ», «երեք գնալ-երկու դառնալ» և այլն) և ըստ այդ պարագայլերի առանձնահատկության (ոտ խաղացնելով, ոտ զարկելով, ոտ անցնելով, ծափ տալով ու չարմա² զարկելով, ծունկկոտրուկներով, թոփքներով և այլն):

Վերլուծելով պարագայլերի համադրությունների բոլոր հնարավոր տարրերակների բնութագիրը, Սրբ. Լիսիցյանը գտնում է, որ այն ենթարկվում է հայկական ազգային պարածի օրինաչափություններին, ընդգրկվում շարժական պարահտուրայի մեջ: Ժամանակի յուրաքանչյուր միավոր համադրվում է մարմնի տարբեր մասերի դիրքերին: Ըստ այդմ, նա մանրամասնում է նկարագրելով. թաթերի,

ծնկների, ագդերի, իրանի, ուսերի, գլխի, ծեռքերի շարժումները, որոնք բնորոշ են հայկական պարաֆոնդին:

«Երկու գնալ-մեկ դառնալ» պարածել սահմանվում է որպես ծանր զյոնդ, ծանր զյոնդ կոտրոցի, ծանր զյոնդ կոտրոցի ճկութահաղութերի: Երկու գնալ-մեկ դառնալ պարածել բնորոշ է նաև Շորոր և Վեր-վերի պարատեսակներին:

«Երկու գնալ-երկու դառնալ» պարածել համդիպում է և թրոնոցի, և թոշարի տեսակի պարերում, իսկ «Երեք գնալ-մեկ դառնալ», «Երեք գնալ-երկու դառնալ», «չորս գնալ-մեկ դառնալ» պարածելում տեղ ունեն կրունկի, կիսամատների և թաթերի հարվածները:

Վերլուծելով պարերն ըստ պարագայլերի առանձնահատկությունների՝ Սրբ. Լիսիցյան առանձնացնում է ինքնատիպ տարրերակներ: Հիմնվելով ժողովրդական բառեգրերին և մտածողությանը, նա բնութագրում է այն առանձին դիրքերը, որ կարող է ունենալ «խաղացող ոտքը»:³ Այն է՝ խաղ ամբողջ թաթով, կիսամատներով, կրունկով, Դա կարող է լինել նմանողական շարժում, արտահայտել տարբեր աշխատանքային գործողություններ կամ որոշակի հոգեվիճակ:

Կարևորելով առաջին հայացքից մանրությացող երկույթները, ընդհանուրի ամրութականությունը վերականգնելու նպատակով՝ Սրբ. Լիսիցյանն անդրադառնում է շարժման ամեն մի մասին, ելեւջին և երանգավորմանը: Վերլուծելով «ոտ զարկել» շարժումն իր պարզ ձևի մեջ, նա անդրադառնում է նաև նրա մյուս դրսևորումների աստիճանական զարգացմանը՝ այն է ոտ գարկել և շրտ գալ, ոտ գարկել և ոտ անցնել, ոտ զարկել ընդհանուր տեղափոխությամբ միայն աջ, ոտ գարկել ընդհանուր տեղափոխությամբ միայն ձախ, ոտ զարկել և ծափ տալ ու չարմա զարկել:

Պարագայլերի համադրումն իրանի պտույտների հետ, որը չի գերազանցում 90 աստիճան պտույտը, անվանում են շորորվել: Սրբ. Լիսիցյանը գտնում է, որ իրանի այդպիսի շարժումը կարող է արտահայտել և մաժորային, և

¹ Ծրբ. Լևսուսահ, նշվ. աշխ., հ. 1, էջ 95:

² Չարմա - թեթևակի կիսամատումով մի ոտքի թաթով հարվածել մյուսի մոտ:

³ Բառեգրը վերաբերվում է հենման կեսից ազատ ութիշ շարժմանը:

մինորային տրամադրություն, որը պարզվում է այդ պարերի բովանդակությունից, երգերի տեքստերից և մեղեղու բնույթից:

Բացի իրանի «շորորվել» կոչվող շարժումից, հայկական ժողովրդական պարերին բնորոշ են քառորդ, կես և լրիվ պտույտները, որոնք կոչվում են «շուր գալ»: «Պարերում առանձնակի շեշտվում են ուսերի՝ վեր ու վար, աջ ու ետ շարժումները, որոնք ժողովրդական խոսվություն հայտնի են «ժշխվել» ձևով:

Հայկական ժողովրդական մասսայական պարերում հազվադեպ են գոտկատեղից ետ մարմնի թեքումները, գլխի և ազդրերի շարժումները:

Մարմնի առանձին մասերի պարային շարժումները բնութագրելուց հաջի, Սրբ. Լիսիցյանը մանրամասն վերլուծում է հատկապես ծեղքերի շարժումները, որոնք բնորոշ են հայկական ժողովրդական պարերին: Նա դասակարգել է փակ դասավորություններում պարողների ծեղքերի դիրքերը (*Վերտ*).¹ Վերահ ծեղ կախված է ծեղքերի դիրքից, որոնք կարող են դրված լինել ուսերին, բոնված լինել արմունկներից, ափերից, ճկույթներից, լինել տարրեր րարձրությունների վրա և այլն: Որոշ պարերի ժամանակ ծեղքերը անշարժ են, իսկ երրեմն կատարում են հորիզոնական կամ ուղղահայաց ճոճումներ, պտույտներ և այլն:

Հայկական ժողովրդական պարերին բնորոշ են նաև ծափերը, որի ժամանակ պարողները ծեղքերը հաց են թողնում («ծեղքերը քանդում են»): Ըստ Սրբ. Լիսիցյանի՝ ծափերն արտահայտիչ շարժումներ են, որոնք վերարտադրում են մարոկանց տրամադրությունը: Իսկ զգացնել դրանք, հավանաբար ունեցել են նմանողական գործառույթ՝ ներկայացնելով ուազմական, աշխատանքային և այլնի հարվածի ձայներ: Ննագույն շրջանի ծիսական գործողություններում ծափերն ունեցել են նաև «չար ոգիներին» վանելու նպատակ:

Ժողովրդական պարերում կատարողները, երբ ծեղքերի բոնվածքով շղթա չեն կազմում,

կարող են կատարել ոչ միայն ծեղքերի իստորեն սահմանված, այլև ազատ, իմպրովիզացիոն շարժումներ:

Ըստ դասավորության՝ հայկական ժողովրդական պարերը Արք. Լիսիցյանը բաժանում է ըստ շարքերի (մեկ կամ երկու) և շրջանների (մեկ կամ երկու), նշելով նաև վերադասավորությունների ժամանակ առաջացող հնարավոր տարրերակները՝ շրջանի նեղացում և գալարում դեպի ներս, պարաշարքի անցում վեր րարձրացված ծեղքերի շղթայի տակով, շրջանից երկու շարք կազմելը և հակառակը:

Պարողների հիմնական դասավորությունը կլոր շրջանով և կիսաշրջանով մեկ շարքն է՝ կողք կողքի: Մեկ շարք դասավորությանը պարերը հայերնի ժողովրդական մի շարք խոսվածքներում հայտնի են գյումնի, գովնի, գիովնի, գիովանի (Մուշ, Տարոն), կոնդ (Խոյ) և այլ անվանումներով:

Ստուգարամնելով գյունի բառը, Սրբ. Լիսիցյանը գտնում է, որ այն ծագել է հայերն գունդ բառից, տվյալ դեպքում՝ մարդկանց հավաքախումբ ինաստով:

Յայ պարագիտության ինքնատիպ ներդրումներից է Սրբ. Լիսիցյանի պարաշրջանի մեկնարանությունը:²

Յայ ժողովրդի պարային ֆոնով հարուստ է շուրջարերով, որոնց ծագումը նա կապում է վաղ անցյալի հետ, երբ քրմեզը մտնում էին շրջանի մեջ և արգելք դնում չար ուժերի առջև: Անհիշելի ժամանակներից շրջանով կանգնելուն գերբնական լսորիուրդ էր վերագրվում, հավատալով, որ այն կարող է պահպանել չար ուժերից, ակնկալելով ծեսի հաջող ելք:

Շրջանով պարը հայտնի է մարդկության պատմության վաղ ժամանակներից: Յայատանի րարձրադիր վայրերի (Գեղարքունիք, Սյունիք) ժայռապատկերներում կան նաև րազմաթիվ ժիսական և պարեր հիշեցնող տեսարաններ՝ թև թևի տվյալ, ծեղքերով իրարունած, ծեղքերը կոնքերին դրած դիրքերով:

¹ Վերտ-շղթայի պես հյուսված զրահ, Տես՝ Դր. Ածառյան, Հայերն արմատական րառարան, հ. 4, Եր., 1979, էջ 332-333:

² Ն. Կիլիչյան, Սրբութի Լիսիցյանը հայ պարագիտության հիմնային, Միջազգային գիտաժողով նվիրված Դ.Աճառյանի գիտական գործունեությանը, Զեկուցումների հիմնարդությանը, Եր., 1994, էջ 60:

Դրանք գուգապարի, խմբապարի և շուրջպարի տեսարաններ են հիշեցնում:¹

Շրջանով դասավորությունը Սրբ. Լիսիցյանը կապում է լուսատուների և պտղաբերության պաշտամունքի հետ: Ըստ նրա, քանի որ շրջանը ծեռվ նման է արևին ու լուսնին, երկրագործության հաջողության ակնկալիքով պաշտամունքային պարերը կապված են եղել եղանակի, արևի և լուսնի ցիկլերի հետ:

Երկնային մարմինների և պտղաբերության պաշտամունքի կապը Սրբ. Լիսիցյանը հիմնավորում է մի բնորոշ օրինակով: Կան մի շարք հայկական ժողովրդական պարեր, որոնց առաջին մասում երկնային մարմինների պաշտամունքին բնորոշ «երկու գնալ, երկու դաշնալ» պարաձևն է, իսկ երկրորդում անցում է կատարվում Վեր-վերի տեսակի թոփքածն շարժումներին, որպես պտղաբերության խորհուրդ: Նա հանգել է այն եգրակացության, որ միայն հայկական պարերի համահավաքն ու ամբողջական ուսումնասիրությունը հնարավորություն կտա բացահայտել նմանողական ծիսական գործողությունների և պարերի առնչությունը:²

Երկնային մարմինների հետ պարաշրջանի կապը դիտարկել են նաև այլ հեղինակներ, այդ թվում՝ մոլդավացի էթնոպարագետ է. Կորուսովան. «Շրջանով կատարվող պարը, ծագելով որպես մասսայական պարի առավել հարմար ծև, խորհրդանշել է արևն ու լուսինը, ունեցել մոգական նշանակություն: Լուսատուների նմանակումը հանգեցրել է փակ շրջանով պարերի կատարման և ծեռքերի բոնելածնի տարրեր տեսակների, որը բնորոշ է աշխարհի շատ ժողովուրդների»:³

Գարնանային ու ամառային տարեկան տոներին կատարվող ոուսական րոլոր շուրջպարերը նվիրված են եղել արևին (Յարիլա): Դրանք սկսվել են արևածագին, պարագլիխ կանչով: Այն պարել են շրջանի կենտրոնում՝ որված կլոր հացի շուրջը, հայացքներն ուղելով դեպի արևելք, ըստ ոուսական

սովորությամ՝ կարծես թե աղուհաց մատուցելով ծագող լուսատուին:⁴

Ոուսական շուրջպարը կատարվել է արևին համընթաց:⁵ Դրա հաստատումն է ոուսերեն «ոո օօօն» բառակապակցությունը:⁶

Պարաշրջանին արև են անվանել նաև լատվիացիները, որոնց ժողովրդական պարարվեստում նույնպես շատ են շուրջպարերը:⁷

Լուսնին նվիրված ծիսական պարեր ունեցել են վրացիները,⁸ Ամերիկայի, Նոր Գվինեայի բնիկները և շատ այլ ժողովրդներ: Աղայիսի պարերի բնորոշ առանձնահատկությունն է եղել նաև հակաղիր ուղղությամբ պատվող երկու շրջանների առկայությունը:⁹

Շուրջպարը վկայվում է նաև հնագիտական տվյալներով Մոլդավիայի և Ռումինիայի տարածքում:¹⁰

Ֆրանսիացիները նույնական ունենալու աշխատանքի և կենցաղի հետ կապված երգերով ու տարրեր արարողություններով ուղեկցվող շուրջպարեր:¹¹ Շուրջպարերը բնորոշ են նաև Լիտվայի,¹² Էստոնիայի, Իսպանիայի և այլ երկրների ժողովրդական պարարվեստին:

Բուլղարները շրջանով կատարվող պարերգերին «խտրո» են անվանում:¹³

Մոլդավացիները այս պարը կատարում են միջյանց ծեռքից րոնած, շրջանով, աջից ձախ: Պարերգի մեղեղին որոշակի ավարտ չի ունեցել, նրա ընթացքը պայմանավորված է եղել երաժշտների հնարամտությամբ և պարողների դիմացկունությամբ:

Ոուսները շուրջպարն անվանում են «խորվող»:¹ Զնայած հնչունային նմանությամբ

⁴ К. Голеизовский, Образы русской народной хореографии, М., 1964, с. 126.

⁵ К. Владыкина-Бачинская, Подмосковные хороводы, М., 1964, с. 3-5.

⁶ К. Голеизовский, նշվ. աշխ., էջ 181-182:

⁷ Х. Суна, Народная хореография на праздниках песни и танца Советской Латвии, М., 1964, с. 2-5.

⁸ Д. Джаваришвили, Грузинские народные танцы, Тбилиси, 1958, с. 8-10.

⁹ Э. Королева, նշվ. աշխ., էջ 135-138:

¹⁰ Э. Королева, Хореографическое искусство Молдавии, Кишинев, 1970, с. 60.

¹¹ М. Васильева-Рождественская, Историко-бытовой танец, М., 1987, с. 12.

¹² Ю. Лингис, З. Славянас, В. Якелайтис, Литовские народные танцы, Вильнюс, 1953, с. 15-17.

¹³ Р. Кацарова-Кукудова, К. Джонес, նշվ. աշխ., էջ 22-27:

¹ Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան, Սյունիքի ժայռապատճերներ, Եր., 1970, էջ 30:

² Հ. Լուսական, նշվ. աշխ., հ. 1, էջ 399-401:

³ Է. Կորոլեվա, նշվ. աշխ., էջ 125-141:

հումարեն «χορός» (պար) բառին, այն միանգամայն տարրեր երևութեք:²

Պարագետներ Կ. Գոլեցովսկի, Է. Կորուսիսի, Ա. Կարարամովսկի, Ա. Ռուդնիկի, Լ. Նազարեայի, Յու. Լինգիսի, Մ. Ժորժիսկայի և այլոց ուսումնասիրությունները վեայում են, որ ամեն մի ազգի շուրջպար ինքնուրույն ծագում ունի:

Նշենք, որ բացի ծիսապաշտամունքային նշանակությունից, պարի շրջանն ունի նաև այլ մեկնարանություններ: Դայոց մեջ այն նույնացվում է կյանքի շրջանի հետ, որը խորհրդանշում է դրա ընթացքը, հարատևումը, մարդկության ու սիեզերքի հավերժ կապը:

Պարի շրջանը հայ ժողովողի պատկերացմամբ կյանքի շրջանն է, որը խորհրդանշում է ժամանակի ու տարածության անվերջությունը: Շուրջպարը իմնականում կատարվում է այդ շրջանով, իսկ մնացած զծերը, շեղումներն ու զիգզագները հյուսվում են առանցք ունենալով այս:

Ըստ շատախցի բանասաց Անահիտ Մարգարյանի՝ պաշտում, տարեց կանայք և յանքի պատույաի մասին ասում էին. «Ես մեր բախտն է, քալլա, այ կնիկ»:

Այսինքն՝ ինչպես պարելիս են շարժվում, այնպես էլ կյանքն է ընթանում:³ Ալդ մասին գրում է նաև Կ. Գոլեցովսկին. «Զվարճություններով նշելով կուպալաի տոնը, որն ազատում է զետերը սառուցից, հողը ձյունից, բեղմնավորելով այն մարդու համար, ոուս ժողովուրդն օգտվում է նույն շրջանից, անիվից, կլոր հացից, այսինքն՝ այն դասական ձևից, որում կենսականորեն ամփոփված է մարդու կյանքի և տիեզերքի գաղափարը»:⁴

Դայ ժողովողական պարերի երկու շարք դասավորությունը իմնականում բնորոշ է ուազմական պարերին, որոնց ժամանակ պարողները կանգնում են դեմ դիմաց:⁵

Սրբ. Լիսիցյանը հայ ժողովողական պարերը դասակարգում է նաև՝ ըստ կատարման ուղղությամ՝ աջ կամ ձախ:

Պարի շարժման ուղղությունները եամաղովում են հետևյալ կերպ՝ ձախ ու աջ, աջ ու ձախ, աջ, ձախ և ետ կամ աջ, ձախ, առաջ ու ետ:

Փակ դասավորությամբ հայկական խմբակային պարերում շրջանը տեղաշարժվում է աջ կամ ձախ, որը, ըստ Սրբ. Լիսիցյանի՝ «մասնակի տեղափոխություն» է: Յազվաղեան սայն պարերը, որոնցում տեղաշարժ է լինում միայն մեկ ուղղությամբ, որը նա որակում է որպես «ընդհանուր գերակշռող տեղափոխություն»: Այս դեպքում նույն ուղղությամբ ավելի շատ քայլեր են կատարվում, քան հակառակ ուղղությամբ:

Սրանց հետ համաղովում են նաև շաբժման միջանկյալ տարրերակները, այն է՝ առաջ ու աջ, առաջ ու ձախ, ետ ու աջ, ետ ու ձախ: Ըստ նրա դասակարգման՝ շարժման րնույթով լինում են աջ և ձախ կամ ըստ ժողովողական արտահայտության՝ «դուզ ու թարս» պարեր:

Ընդհանուր տեղափոխության ճիշտ ուղղությունը ավանդաբար եամարվում է աջը: Ըստ ժողովողական հավատալիքների՝ աջ ուղղությունը համարվում է դրական, հաջողակ, ճշմարիտ, ոչ միայն պարի համար, այլև ընդհանրապես: Պարի աջ ուղղությունը Արք. Լիսիցյանը մեկանարանում է՝ ելնելով ժողովողական այն պատկերացումից, որ դրանք ակնկալում են հաջողություն ու պտղարերություն: Պատահական չէ, որ դեպի հաջողությունը ժողովուրդը «թարս պար» է համարում՝ շեշտելով, որ զյություն ունի ճիշտը, ուղիղը, աջը:

«Թարս» (tars-սանսկրիտ.) բառարմատը, ըստ Յ. Անառյանի՝ նշանակում է ծարավ, իսկ հնդեվրոպական լեզվախմբում՝ չորանալ: Դայերենում դրանք համապատասխանում են երաշտ և չորություն բառերին, որոնք առնչվում են ձախորդության, հողի ծարավի, բերքի կիրստի և այլ աղետների հետ:

Սրբ. Լիսիցյանը դրանով է ուցաւորում Վեր-Վերի տեսակի պարերի կապը պտղարերության հետ, քանի որ հաջող, աջ ընթացքի

¹ К. Голеизовский, նշվ. աշխ., էջ 118-119:

² В. Мальми, Круг или хоровод?, Советский балет, 1, 1990, с. 33-35.

³ С. Лисициан, նշվ. աշխ., հ. 2, էջ 369:

⁴ К. Голеизовский, նշվ. աշխ., էջ 178:

⁵ Տես Ռ. Մազմանյան, նշվ. աշխ.:

պարեր են: Հակառակ դրանց Գորանի տեսակի պարերը, որոնք ծախ են կատարվում, «թար», անհաջող ընթացք ունեն և համարվում են երաշտի ու չորության խորհրդանշ:

Երաշտը տնտեսությանը կարող էր պատճառել իսկայական վնասներ: Օարավից չորացած հողը Ոսկերերանը համարում է. «Կույս, որը ամուսնական կյանք չը ապրել և երաշտի պատճառով ծարավի է խոնավության ու պտղաբերության»:

Ըստ ազգագրական տվյալների՝ նմանատիպ ծարավ «հող-կույսի» կերպարը ժողովուրդը մարմնավորել է տիկնիկի տեսքով, որը պատրաստվել է ցախավելին հորիզոնական փայտ ամրացնելով:

Այդ տիկնիկին գուգում, հագցնում էին, գլխին հարսի քող զցում: Հայոց տարրեր պատճառագրագրական շրջաններում սյն հայտնի էր «նուրի-նուրի», «անձրևի հարս», «անձրևահարս», «անձրևի խըռծիկ» և այլ անվանումներով: Երաշտի ժամանակ երեխաներն այդ տիկնիկի հետ շրջում էին տնետուն, իսկ ժողովուրդը նրանց վրա ջուր էր ցանում և մթերքներ տալիս:

Սրբ. Լիսիցյանը հատուկ նշում է ծախ կատարվող պարերի կապը անբերիության ողբի հետ: Չնայած դրանք նման են Վեր-վերի տեսակի պտղաբերության պարերին, բայց ընդհանուր տեղափոխությունը դեպի ծախ է կատարվում:

Աչ ու ծախ ընթացող պարերում արտահայտվել են վրա հասած աղետներն ու դժբախտությունները. դրանք ունեցել են նաև չարխավան հնայական նշանակություն, որոնք ուղեկցվել են շարժումներով ու երգերով:

Դրանցից մեկն էլ Ալաշկերտի Գորանին է, որը որպես անձրևաբեր ծես, երաշտի ժամանակ կանայք պարել են գլխին որած, ջրով լցված պղնձե թասով:¹

Ազգագրական իրականությունից հայտնի են անձրևաբեր և երկարատև տեղումները դադարեցնելու այլ ծեսեր և հայոց և այլ ժողովուրդների հավատալիքներում: Երաշտի ժամանակ Սյունիքում և Հայաստանի սյլ պատճառագրագրական շրջաններում, կանայք

վարել են գետի հունը: Վրաստամում, ամուսնական տարիքի հասած աղջիկները, գույզերով լծվել են լծասարքին ու աղոթելով, լալով ու ծիծաղելով անցել գետը:²

Զրով լի թասով, բաժակով կամ սկուտեղի վրա դրված բաժակներով պարերը, որպես ջրի պաշտամունքի հետ առնչվող գործողություններ, կատարվել են նաև Վարդավառի ժամանակ: Գլխին դրված ջրով լի բաժակով պարը սյժմ գրեթե մոռացվել է:³

Փոխվել է նաև պարի ընկալման չափանիշը. եթե անցյալում պարողի անգայուշ շարժման հետևանքով ջրի թափվելը համարվում էր չարագուշակ նշան, ապա հետագայում ջուրն առանց թափելու գլխին պահելն ու պարելը համարվում էր ընդամենը գվարծություն և պարողի ճարպկությունն ու վարպետությունը ցուցադրելու հնարավորություն:⁴ (Արյուսակ XIX, նկ. 2):

Գորանի տեսակի պարերը տարածված են եղել Շատախում, Ալասունում, Էրգումում, Հայոց ծորում և այլուր:

Սրբ. Լիսիցյանը պարերը դասակարգում է նաև ըստ մասնակիցների քանակի, սեռերի, տարիքի, կատարման տեղի ու ժամանակի:

Ավանդարար պարել են բաց և փակ տարածքներում: Պարել են բաց երկնքի տակ, ժողովրդական տոների⁵ ու հարսանիքների ժամանակ՝ եկեղեցիների բակերում, կալերում, տների կտորներին և ուխտատեղիներում:⁶

Ըստ Սրբ. Լիսիցյանի՝ փակ պարատեղեր են եղել հարմարեցված շինությունները և օդաները:

Հայկական ժողովրդական պարերը, ըստ մասնակիցների քանակի, նա բաժանում է մասսայական, խմբական, գույգ և կենտ: Հասարակական պարերը խմբականից տարբերվում

² Զ. Ֆրեզեր, Ոսկե ճյուղը, Եր., 1989, էջ 37-38:

³ Այն ցուցադրվել է 1930-ական թթ. օլիմպիադաներում, 1936թ. Մոսկվայում, ժողովրդական պարի փառատոնի ժամանակ: Նման պար, որը կոչվել է Անլֆինազ, պարել է դադսանցի մի աղջիկ: «Շուշանքարի» պարը նման է դրան (Արյուսակ XI, նկ. 1):

⁴ Կ. Գոլեմզօվսկի, Խնձոր և տօրություն, Մ., 1984, ս. 265.

⁵ Ա. Արշարունի. Հայ ժողովրդական թագերախաղեր, Եր., Եր., 1961, էջ 21:

⁶ H. Sarkissian, From Kessab to Watertown; Modern Saga, Watertown, 1996, p. 123.

¹ C. Լուսաւահ, նշվ. աշխ., հ. 2, էջ 18-20:

Են մասնակիցների անսահմանափակ քանակով և շարժումների պարզությամբ:

Լինելով ժողովրդի հավաքական կերպարի արտահայտություն՝ հայոց մեջ ավանդարաը գերիշխել են մասսայական և խմբական պարերը:¹ Մենապարերի և զուգապարերի թիվը քիչ է եղել:

Ժողովրդական պարերի մասսայական ու խմբական կատարումները բնորոշ են նաև ռուսների, ռուլդարացիների, լիտվացիների,² ուկուինացիների³ և շատ այլ ժողովրդների պարարվեստին: Նրանց, ինչպես նաև վրացիներին, բնորոշ են նաև մենապարերն ու զուգապարերը:⁴ Մերձրալիքան ժողովրդների և բելոռուսների մեջ ընդունված են նաև խմբական զուգապարերը:

Ժողովրդական մենապարերը հազվադեպ են հանդիպում. դրանցից առանձնանում են իսպանական «Ֆլամենկո» ոճի պարերը, որոնք տարածված են Անդալուզիայում:⁵

Հետաքրքրական են Սլովակիայի ուսումնասիրություններն ու մեկնաբանությունները պարում մասնակիցների տեղի, այն հիերարխիայի մասին, որն ավանդարար պահպանվում և փոխանցվում է սերնդեսերումդ:

Բովանդակությանն ու նպատակաղըմանը հաճապատաժան, մասսայական պարերը կարող էրն պարել ինչպես ամուսնացած տղամարդիկ ու կանայք, այնպես էլ՝ չամուսնացած երիտասարդներն ու աղջիկները: Ավանդարար հաշվո էրն առնում պարողների տարիքն ու սեռը, կողք կիոքի կանգնած տղամարդկանց ու կանանց ազգակից կամ բարեկամ լինելու հանգամանքը: Այրի տղամարդիկ ու կանայք իրավունք չեն ունեցել մասնակցելու պարերին, հատկապես հարսանիքների ժամանակ:⁶

¹ Սպ. Մելիքյան, Ուրվագիծ հայ երաժշտության պատմության, Եր., 1935, էջ 36:

² Ю.Лингис, Э.Слаевнас, В.Яналайтис, նշվ. աշխ., էջ 8-10:

³ Р.Герасимчук, Особенности украинских народных танцев карпатского района, М., 1964, с. 3-5.

⁴ М.Козенка, Лексика белорусского народно-сценического танца, М., 1993, с. 42-64.

⁵ Л.Кларрамунт, Ф.Альбайсин, Искусство танца фла-фламенко, М., 1984, с. 8-10.

⁶ К.Голейзовский, Образы русской народной хореографии, М., 1964, с. 143.

Մասսայական ու խմբական պարերում նշանակալից դեր ու տեղ ուներ պարագլուխը: Այս կերպարի բնութագրումնը իր աշխատության մեջ Սլովակիայի նվիրել է առանձին գլուխի՝ «Առաջնորդի դերը հայ ժողովրդի հինավորը կոլեկտիվ պարերում և դրամատիզացիայի գծերը նրանում»:⁷

Պարագլուխին նա նույնացնում է համայնքի ղեկավարի, սպարապետի, գլխավոր քրմի հետ: Դայերենի տարբեր խոսվածքներում պարի սրացնորդը հայտնի է նաև թոյբաշի, կոնդ քաշող, հոպա քաշող, վեր-վերիչ, պարապետ, խաղապետ և այլ ծևերով:

Առաջնորդը ղեկավարում է պարի ընթացքը, նշաններով ցույց տալով դրա սկիզբը, պարածկը փոխելու կամ այն ավարտելու ժամանակը և այլն, հատկապես մեկ մաս ունեցող պարերում, ապահովելով տեմպի արագացումը: Պարագլուխը ղեկավարում էր նաև երաժիշտների գործողությունները կամ գուգընթաց երգերի կատարումը:

Պարագլուխին, ժամանակակից արտահայտությամբ, կարելի է նույնացնել ղիրիժորի հետ: Կոլեկտիվ պարի մասնակիցներից մեկը նրա օգնականն էր, որը պարերգերի ժամանակ աջակցում էր պարի ղեկավարին ու կարգավորում պարի ընթացքը:

Կարևոր դեր ուներ նաև պարաշարի վերջին պարողը, որը ժողովրդական խոսվածքում հայտնի է «պարի պոչ» կամ «պարի ծեր» անվանումներով: Ըստ ժողովրդական պատկերացման, քանի որ պարաշարան ղիտվում է որպես մի ամրողական, շարժվող կենդանի էակ, որն ունի սկիզբ ու վերջ, գլուխ ու պոչ, տրվել են նման որակիւմներ՝ «պարագլուխ» և «պարի պոչ»:⁸

Դայ ժողովրդական պարերի բնորոշ առանձնահատկություններից է նաև հանպատրաստից ստեղծագործելու արվեստը (իմպրովիզացիա):

⁷ Срб. Лисициан, նշվ. աշխ., հ. 2, էջ 132:

⁸ Ուսումնական պարային ֆոլկլորում հայտնի է «Այշ» կոչվող շուրջպարը, որի ժամանակ պարաշարան նմանվում է օծի սահող, գլուխազառ շարժումների, Տես՝ Կ. Գոլեյզովսկու, նշվ. աշխ., էջ 127:

Ըստ Սրբ.Լիսիցյանի՝ իմպրովիգացիայի միջոցով, կենցաղավարնան նոր պայմաններում վերաիմաստավորվել է պարոի նախնական գաղափարը: Իմպրովիգացիայի հնարավորությունները հատկապես շատ են կենտ ու գույզ պարութում, քանի որ դրանք հստակ կարգավորված դասավորություն և կայուն ձևավորված զարդանախշ չունեն, ինչպես մասսայական կամ խմբական պարերում:

Մասսայական կամ խմբական պարերում իմպրովիգացիայի հնարավորություն է ստեղծվում պարագիսի, նրա օգնականի և պարի պոչի համար:

«Դայկական պարերի իմպրովիգացիոն ստեղծագործական կատարումը վկայում է այն մասին, որ դրանց բովանդակությունն ու ձևը երրեք չեն դադարել զարգանալ իրենց միջավայրի, կենցաղի պայմաններում, որն ունեցել է ից առանձնահատկությունը Արևմայան և Արևելյան Դայաստանի յուրաքանչյուր շրջանում, զուրում ու քաղաքում, սոցիալական յուրաքանչյուր խափում:

Զարգացող ձևի ներսում միաժամանակ ամրապնդվում են առանձին պարածերի, պարային ֆրագմերի, պարաքայլերի և այլ շարժումների մնացուկները, ինչպես և անցյալից ժառանգված զգալի նյութն է երկարատև պահպանվում մեղեդիներում ու տեքստերում: Դատկապես երկար է պահպանվել հայկական մնացախաղային-պարային լեզվի արմատների համաժողովրդական հիմնական շարժական ֆոնդը»:¹

Ավանդաբար հայ ժողովրդական պարերը բաժանվում են նաև ըստ կատարողների սեռի և տարիքի: Ըստ այդ չափանիշների՝ եղել են տարեց տղամարդկանց և կանանց, միջին հասակի և երիտասարդների ու մանկական պարեր: Խսկ ըստ սեռի՝ Ա. Լիսիցյանի դասակարգմանը, տղամարդկանց պարերը հիմնականում ուազմական են, կանանց՝ քնարական կամ աշխատանքային: Կան նաև խառը պարեր, որոնց մասնակցել են երկու սեռերի և տարբեր տարիքի մարդիկ:

Գիտարշավների ժամանակ հարուստ պարային նյութ գրանցելով, Սրբ. Լիսիցյանը չի

անտեսել նաև մանկական պարերը: Դրանց մի մասը նա բեմականացրել է պարարվեստի ուսումնարանի ազգագրական պարերի խմբում (Օյիկ-մոյիկ, Նինար, Դառ լիլա, Զամբիկ, զամրիկ պար արի, Դայկական մարշ, Քրոդան-կզի, Կուրկուտիկ, Եկեք ծեծենք սոխն ու սխառոր և այլն) (Այսուսակ XI):

Սրբ. Լիսիցյանը նշում է, որ մանկական պարերը կարող էին ստեղծվել հենց մանկական միջավայրում, իհարկե մեծերի օգնությամբ:

Կան նաև մանկական պարեր, որոնք ստեղծվել են մեծերի միջավայրում որպես ծիսական կամ աշխարհիկ և երբ դադարել են գոյություն ունենալուց՝ կապված ծեսի անհետացման հետ, անցել են երեխաներին (Այսուսակ XII):

Որոշ մանկական պարեր կատարվել են պարկապուկի նվազակցությամբ, բայց հիմնականում՝ մասնակից երեխաների երգով: Մանկական պարերին բնորոշ են փոփոխական քայլերը, եղկու ոտքով կամ մի ոտքից մյուսը թոիչքները, կքանստումները՝ ծափերի հետ գուգակցված:

Դետագայում՝ կենցարում և աշխարհայացքում տեղի ունեցած փոփոխությունների հետ գուզընթաց, շատ ծիսական պարեր փոփոխեցվել են խաղի, կորցնելով շարժումների նախնական պարային բնույթը:

Պարանյութի վերլուծման ընթացքում կարևորելով երաժշտության դերը՝ Արք.Լիսիցյանն անդրադառնում է նաև պարածերի երաժշտական չափերին, պարի ու երաժշտության հարարերակցության հարցերին: Նա մասնավորապես վերլուծում է մեղեդու և պարային ֆրագի համապատասխանության խնդիրը՝ այն կապելով հետագա շրջանում մեղեդու ծևափոխման հետ:

Քանի որ կարծ մեղեդին կրկնությամբ հոգնեցնում է ունկնդրին, որը երկար մեղեդուն բնորոշ է, ուստի ժամանակի ընթացքում տեղի են ունեցել որոշ ծևափոխություններ:

Դայոց մշակույթի բնագավառում Արք. Լիսիցյանի կարևոր ներդրումներից է նաև հայկական ժողովրդական երաժշտական գործիքների ուսումնասիրությունը, որանց ծագումնարանությունը, առանձնահատկություն-

¹ Ծրբ. Լուսաւան, նշվ. աշխ.. հ., էջ 139:

Աերը, անվանումների բարբառային տարրերակներն ու դրանց տերմինաբանական վերլուծությունը։ Այդ ամենն ամբողջացնում է նրա հավաքած հարուստ պատկերագրական նյութը՝ սկսած իին հունական սափորանկարչությունից մինչև Հայաստանի տարբեր պատճազգագրական շրջաններին վերաբերող լուսանկարներ։

Հայկական ժողովրդական պարերը Ազք. Լիսիցյանը հիմնականում դասակարգում է ըստ պարատեսակների՝ Վեր-Վերի, Քոչարի, Շորոր, Յեղ ու առաջ, Գորամի, Գյոնող, Շիդագ դուզ պահախաղեր և այլն, որոնք համարում է վաղ անցյալի ծիսական պարեր։ Նա Քոչարի, Շորոր տեսակի պարերին և Շիդագ դուզ պահախաղերին վերագրում է տոտեմական ծագում, տերմինաբանական վերլուծություններով բացահայտելով դրանց բնույթը։¹

Քոչարի բարի արմատը նա համարում է «քոչ»-ը, որը կապված է խոյ, դոչ, քոչ բառարմատների հետ։ Նա խոյ բարի հետ է կապում մի շարք երևույթներ՝ խոյակ, որպես տոտեմ, խոյի համաստեղություն, խոյ քաղաք։ Քոչարի պարի շարժական տեքստի վերլուծությունը հանգեցնում է այն եգրակացության, որ թերևա, կապվում է խոյերի կամ այծերի պաշտամունքի հետ։ Ազք. Լիսիցյանը զուգահեռ է անցկացնում իին հունական Դիոնիսոսին նվիրված տոնակատարությունների այծապարերի և հայկական «Տոնք Ապանդարամետականքի» այծապարերի միջև։

Շորոր տեսակի պարերը նա կապում է կաքավի շարժումների հետ, դրանք համարելով կաքավ-տոտեմի պաշտամունքի վաղագույն արձագանքներ։

Նշանավոր ազգագրագետն ու պարագետը ուսումնասիրել և կասակարգել է նաև հայ ժողովրդական էակական, ռագմական, հարսանեկան, «ճամփու», սգո և ողրի, անեծքի կամ բուժական պարերը։²

«Հայ ժողովրդի պարային և թատերական ֆոլկլորը» թեմայով գեկուցմանը Ազք. Լիսից-

յանը հանդիս է Եկել 1964թ. Մոսկվայում տեղի ունեցած մարդարանական և ազգագրական գիտությունների միջազգային 7-րդ կոնգրեսում։³ Նա հանգամանորեն ներկայացրել է հայ ժողովրդական պաշտաման և թատերական ֆոլկլորի հավաքման, գրանցման և դասակարգման ուղղությամբ տարված աշխատանքը։ Հատուկ նշվել են հայ էակական պարերգերը («Սասունցի Ղավիթ», «Ավարայրի ճակատամարտ», «Տիգրան Մեծ», «Պապ թագավոր», «Քյոռ-Օղլի»), որոնք առանձնահատուկ տեղ են գրավում ժողովրդական պարագունդում և կատարվել են պարկապատճենի նվազակցությամբ։

Փոքր Հայքում Բարեկենդամի հիմնագարքի օրը կանայք և աղջիկները երգել են հատվածներ՝ «Աշուղ Ղարիբից», «Ծահ Սանամից», «Ծահ Խմայիլից», «Խուրշիդ Բեկից» ու պարել։⁴ Երգելով կամ պարկապատճենի նվազակցությամբ համաժողովրդական մասսայական պարերի կատարման հնագույն ավանդույթը պահպանվել է մինչև 20-րդ դարի սկիզբը։ Այդպիսի պարերին հաճախ մասնակցել են հարյուրավոր մարդիկ։

Ազք. Լիսիցյանը մանրամասնորեն գրանցել և ուսումնասիրել է Արևմտյան Հայաստանի տարբեր պատճազգագրական շրջաններից։ Եղեռնից մագաղուրծ վիճկված բնակչության պարերն ու պարերգերը։ Նա սեփական միջոցներով ամեն կերպ ձգտել է հավաքել ու գրանցել դրանք՝ կարևորելով որպես մեր ժողովրդի հոգևոր մշակույթի արժեքներ։

Ըստ Ազք. Լիսիցյանի՝ հայկական պարի անբողջական ուսումնասիրումը չի կարող սահմանափակվել միայն մեկ աշխարհագրական և սոցիալ-քաղաքական հատվածով։⁵ Նա կարևորում էր հայոց երկու խոշոր հատվածների մշակութային արժեքները հավասարապես ուսումնասիրելը, ընդգծելով սակայն, որ Արևմտյան Հայաստանում ավանդական նյութը ավելի հարուստ է և ավելի անառարտ

¹ Պ.Զահարօ, Исследуя старинные пляски Армении, Советский балет, 1984, 3, с. 58.

² Ծրբ. Լիսիցյան, Արմянские старинные пляски, Е., 1983, с. 80-91.

³ Վ. Բրյուս, Մրրուիի Լիսիցյան, Օննյան 70-ամյակի առելիվ, Տեղեկագիր, 1964, 9, էջ 93-95:

⁴ Ծրբ. Լիսիցյան, Танцевальный и театральный фольклор армянского народа, М., 1964, с. 8.

⁵ Ծրբ. Լիսիցյան, Докладная записка, М., 1939, с. 14.

ԴԱՄ, Ազք. Լիսիցյանի արխիվ:

է պահպանվել, դա բացատրելով թերևս սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններով, երբ բնատնտեսությունը մնում էր տնտեսավարման գերիշխող օն, գերդաստանները դեռևս գոյատևում էին, թույլ էին արտաքին կապերը և այլն:

Ցարական Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող հատվածում բնատնտեսության և գերդաստանի անկման գործընթացն ավելի վաղ է սկսվել և քաղաքների գարգացմանը գորգահեռ՝ մշակույթի քաղաքականացման (ուրբանիզացիոն) ընթացքն ավելի ակնառու է:

Արք. Լիսիցյանը պարերը տարբերակում է նշելով նաև, որ յուրաքանչյուր շրջան ունի իրեն բնորոշ պարային մշակույթ: Տարբերություն կա նաև շրջանի ներսում՝ կապված գյուղական և քաղաքային մշակույթների հետ: Նա նշում է, որ պարերի հետազա հավաքումն ու գրանցումը թույլ կտա բացի պարերի ըստ ծնկի ու րովանդակության դասակարգման, կատարել դրանց տեսակների ավելի խորը վերլուծություն ըստ տարածաշրջանների, համեմատելով պարերի գյուղական և քաղաքային նյութերը և պարգևով դրանց սոցիալական առանձնահատկությունները:

Արք. Լիսիցյանի ներդրումը մեծ է ոչ միայն հայ, այլև քրդական ժողովրդական պարարվեստի ուսումնասիրության հարցում: Դաշտային հետազոտությունների ժամանակ նա հավաքել ու գրանցել է շուրջ 50 քրդական պար, կարևորելով նաև այն հանգամանքը, որ հարևան ժողովրդի մշակույթի, այդ թվում նաև պարերի ուսումնասիրումը կնպաստի ճանաչելու նրանց մշակույթը ևս, դիտարկելով դրանք նաև հայկական պարերի լիարժեք ուսումնասիրության համար:

Դայ ժողովրդական պարարվեստի վերաբերյալ Արք. Լիսիցյանի ուսումնասիրությունները լուսաբանում են նաև ազգային մշակույթին վերաբերող շատ հարցեր և հիմք հանդիսանում ժողովրդական պարի ծիչտ, հարազատ ծԼին ու րովանդակությանը հարիր բեմադրական մշակման համար:

Սգգագրագետ, պարագետ Արք. Լիսիցյանի ներդրումն անգնահատելի է համաշխարհային և հայ էթնոպարագիտության (էթնոլոգեո-

լոգիա) ասպարեզում, որը նշում են նաև օտարազգի էթնոպարագետները:

Ծարադրելով հայ պարագիտության հիմունքները՝ Միք. Լիսիցյանը դարձավ ազգագործության մի նոր ուղղությամ՝ էթնոպարագիտության և հայ պարագիտական դպրոցի հիմնադիր,¹ որը մեծ ճանաչում ծնող բերեց Խորհրդային Սիրությունում և միջազգային ասպարեզում:

Նա ստեղծեց շարժումների գրանցման նոր եամակարգ, ըստ որի հնարավոր դարձավ գրանցել ու պահպանել ազգային պարերն ու թատերական ներկայացումները, որոնք այդ կերպ փրկվեցին անխուսափելի կորստից ու մոռացումից:²

Սրբութի Լիսիցյանի շնորհիվ հիմք դրվեց մի արլսիվը, որը բաղկացած է մոտ 2000 պարային ու թատերական նմուշից:³ Նրա ուսումնասիրությունների մի մասը հրատարակված է ոուսերեն, իսկ մյուսը մասը անտիպ է: Դայ պարագիտության հետագա գարգացման համար շահեկան կլիներ ունենալ Մրրութի Լիսիցյանի աշխատությունները հայերեն հրատարակությամբ:

Նրա ուսումնասիրությունների արժեքը ոչ միայն պարերի, պարեդանակների ու տեքստերի հրատարակման, այլև դրանց ժամբերի, առանձին խմբերի, ծների գիտական դասակարգման մեջ է: Նա մշակել է պարերի վերլուծության նոր, ամրողական մեթոդ, բացահայտել հայ ժողովրդական պարերի ժամրային հատկանիշները, հնագույն շրջանից եկող եւթյունը, նշանակությունն ու բովանդակությունը:⁴

Արք. Լիսիցյանը հայտնի է ոչ միայն հայ պարարվեստի տեսական, այլև գործնական բնագավառում: Նրա բեմադրական գործունեությունն ընդգրկել է պարային տարբեր ուղղություններ և ոճեր, որում հատկապես ընդգծվել է հայ ժողովրդական պարերի համա-

¹ **Ժայլական**, Հայկական պարը գիտության լույսի տակ, Սովետական արվեստ, 1965, 1, էջ 63-64:

² Յ.Պետրոսյան, Ծբուն Լիսիցյան, Սովետական էթնոգրաֆիա, 1980, 2, ս. 188-189.

³ Է.Պատրոսյան, Կաստակաշատ գիտմականը, Լրաբեր, 12, 1973:

⁴ Народный танец, проблемы изучения, ред. Л. Ивлева, СПб, 1991, с. 52-54.

կարգված ուսումնասիրման հիման վրա իրականացվող բեմադրական աշխատանքը: Արդյունքում, նրա գրանցած հայ ժողովրդական պարերը բեմական մշակման են Ենթարկվել, այդ կերպ պահպանելով ու նորովի ներկայացնելով այն:

Սրբ. Լիսիցյանը Դայաստանի պարային կրթության հիմնադիրներից է, որի ճիշտ դրվածքը նա համարում էր այն կարևոր հիմքը, որը պետք է ձևավորեր ժողովրդական և բեմական պարարվեստի հետագա ընթացքն ու ապագան:¹

Սրբ. Լիսիցյանի աշխատությունները հայ ժողովրդի հոգևոր մշակույթի հետագա ուսումնասիրման արժեքավոր պատմական սկզբնադրյուրներ են:² Դրանք ժամանակի ընթացքում ոչ միայն չեն կորցըել իրենց արժեքը, այլև դասական ստեղծագործության որակ են ծեռք բերել:³

Ներկայումս նրա հիմնադրած պարագիտական դպրոցի սկզբունքներով է աշխատում

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ագգագրության ինստիտուտի ագգագրության բաժնի պարարվեստի խումբը: Խմբի անդամները պահպանում ու զարգացնում են այն ուղենիշերը, որոնք ժառանգել են իրենց ուսուցչից՝ Սրբուհի Լիսիցյանից: Նրանց ուսումնասիրությունները տարվում են մի քանի ուղրություններով, այն է՝ դաշտային աշխատանքներ, ժանրային ու ծագումնարանական վերլուծություններ, ծեսերի շարժական, բանավոր և երգային տեքստերի վերականգնումներ, ժողովրդական պարի ժամանակակից մշակումներ:

Յիմք ընդունելով Սրբ. Լիսիցյանի դասակարգումը, այսօր այն Ենթարկվում է աստիճանական կատարելագործման, որը հնարավորություն է ընձեռում բացահայտելու: Մի շառը հարցադրումներ հայ եթոպարագիտության բնագավառում:

¹ 1993թ. Սրբ. Լոսովասոն անունով կոչվեց Երևանի «Սխիթար Սերաստացի» կրթահամալիրի պարարվեստի դպրոցը:

² Աղավանի, Դանդապումներ Մարինետա Ծահինյանի հետ, Գարում, 1982, 11, էջ 86-87:

³ Է. Պետրոսյան, ժողովրդական պարային և թատերական ժառանգության ուսումնասիրությունն ու պրոպագանագում Դայաստանում, Կոմպոզիտորների միության պլենումի նյութեր, Եր., 1973, էջ 23-27:

Ս. Լիսիցյանի թեմադրած պարերը 1920-1930-ական թթ.

Սյուժետային, ոճավորված պարեր, ոիթմասլևստիկ էտյուդներ

Աշխատանքային գործողություններ, «Առավոտ» Պեր-Գյունտ պուհած (Երաժշտ. Է. Գրիգ), Սրաբական պար, Գավոտ, Գերմանացի պոլիցայը և կոմունիստը (ռիթմիկ խաղ), Դրոշակներով վալս, Եգիպտական պար, Երիր պատրաստ (ռիթմիկ խաղ), Երաժշտական պահ (Երաժշտ. Ֆ. Շուրերտ), Էյյուդ (Երաժշտ. Ֆ. Շոպեն), Էտյուդ «Մեքենայի շարժման մեխանիզացիա», Թենիսի խաղ, Կեցցե կարմիր Հինաստան, Կոմինտերն (Երաժշտ.Ա. Պրոկոֆև), Շեյդարի, Շերոսական մարշ, Շնդկական պար, Շոմմեական զինվորների պար, Շունական բարելեֆ, Շայթարմա (Երաժշտ. Ա. Սաբենյարյան), Մարշ (Երաժշտ. Ֆ. Շուրերտ), Մահվան պարը (Երաժշտ. Կ. Սեն-Սանս), Մանկապիկի պար (Երաժշտ. Ֆ. Կրեյսլեր), Մանկական վեճ և հաշտություն (Երաժշտ. Ժ. Շայդն), Մութրուրա (Երաժշտ. Ա. Օգանեզավիլի), Մուրճ ու մանգսդ (Երաժշտ. Կ. Զաքարյան), Յարլոչկա, Յոք պար Ո. Մելիքյանի Երաժշտությամբ, Ով չի աշխատում, նա չի ուտում (Երաժշտ. Ո. Շուման), Պարետիկ սոնատ (Երաժշտ. Լ. Բեթհովեն), Պայքար ճեղքվածքների դեմ, Պարեր Զ. Վերդիի «Արդա» օպերայից, Պարեր Ա. Ապենդիարյանի «Ալմաստ» օպերայից, Պարեր Ո. Շումանի սիմֆոնիկ էտյուդների Երաժշտությամբ, Պար (Երաժշտ. Ո. Շուման, Սիմֆոնիկ էտյուդ, թիվ 5), Պիոներական պար, Պոլկա, Ռուսական պար, Կալպուրգյան գիշերներ (Երաժշտ. Ծ. Գունո), Վալս (Երաժշտ. Ֆ. Լիսա), Վիրավոր դրոշակակիր, Վրաց տղաների պարը (Երաժշտ. Ա. Բարխուդարյան), Տամբուրին, Ֆիզկուլտ մարշ:

Շայկական ժողովրդական պարեր

Ալագյազլի, Բադայլո, Ղե բժան-դժան, Ղընգօ, Էկեք ծեծենք սոխն ու սխտոր, Զայնուկե, Զերագի, Զնգիկ, Թամր-սրդայի, Թամուրի, Թրախաղ, Թուր ու մարթալ, Լուդկո, Լուրկե, Կոնկավեն, Կուրկուտիկ, Շայ ջառ, Շառուղյա, Զեռնախաղ, Զիավեն, Ղասար Արյասի, ճամփխավեն, Սամըռ, Մաշինո, Մշու խոր, Յար-խուշտա, Նարե, Շամդան, Շարանի, Շարաֆանի, Շաքր-աղայի, Շորոր, Չոլ-մայդան, Ռանգի, Սաքմա, Վեր-վերի, Ցոլակի, Ուզունդարա, Փափուրի, Քերծի, Ջորօրլի, Քոչարի, Քըրդան կզի, Օյիկ-մոյիկ:

ՍՐԲՈՒՅԻ ԼԻՍԻ ՅՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1893թ. - Ծնվել է Թիֆլիսում:

1909թ. - Ավարտել է Թիֆլիսի առաջին իգական գիմնագիայի 7-րդ դասարանը ոսկե մեդալով:

1910թ. - Ավարտել է նույն գիմնագիայի 8-րդ մանկավարժական դասարանի պատմաշարհագրական բաժինը:

1910-11թթ. - Գիմնագիայում դասավանդել է պատմություն և գերմաներեն լեզու:

1911-17թթ. - Սովորել է Մոսկվայի Գերյեի անվան իգական րարձրագույն կուրսերի պատմաֆիլիսոփայական ֆակուլտետում:

1915-17թթ. - Սովորել է Օ. Է. Օգարովսկայայի դրամայի և արտահայտիչ խոսքի ստուդիայում, որտեղ միաժամանակ եղել է ասիստենտ-դասատու:

- 1916-17թթ. - Սովորել է Ի. Ա. Չերմեցկայայի պարի ստուդիայում և եղել ասիստենտ-դասախու:
- 1917թ. - Թիֆլիսում հիմնել է իոսքի արտասանության, ոիթմի և պլաստիկայի ստուդիա:
- 1921թ. - Խորհրդային շրջանում Վրաստանի Լուսժողովում ստուդիան դարձնում է ոիթմի և պլաստիկայի ինստիտուտ:
- 1921-25թթ. - Բեմական շարժում, ոիթմ և պար է դասավանդել Թիֆլիսի կոնսերվատորիայի օպերային դասարանում, «Դայարտան» դրամատիկական ստուդիայում և թուրքական դրամատիկ թատրոնում:
- 1930թ. - Դրավիրվել է Երևան և ստանձնել ոիթմի, պլաստիկայի և ֆիգուրատորայի պետական տեխնիկումի դեկավարությունը:
- 1932թ. - Թալինի շրջանում մասնակցել է Դայկական ԽՍՀ նյութական մշակույթի ինստիտուտի բանահյուսության բաժնի գիտարշավին և գրանցել շուրջ 70 պար:
- 1932-35թ. - Եղել է Լուսժողովում նյութական մշակույթի ինստիտուտի գիտաշխատող:
- 1932-36թթ. - Տեխնիկումը վերակազմավորվել է ոիթմի, պլաստիկայի և պարի ստուդիայի և գործել նրա դեկավարությամբ:
- 1936-38թթ. - Ոիթմի, պլաստիկայի և պարի ստուդիան դարձել է պարարվեստի ուսումնարան, որի տնօրենը և ավագ դասատուն է Եղել Սրբուհի Լիսիցյանը:
- 1936թ. - Մասնակցել է Նոր Բայագետի և Արմաղանի շրջանների գիտարշավներին:
- 1936թ. - Ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ Լեմինգրադի Արևելագիտության ինստիտուտի կովկասագիտության կաբինետի անդամ:
- 1940թ. - Լույս է տեսել նրա «Շարժման գրանցում» (կիմետոգրաֆիա) գիրքը:
- 1940թ. - Ալուացել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան՝ «Շարժման գրանցում» ուսումնասիրության համար:
- 1941թ. - Սոսկվայի «Իսկոստե» հրատարակչությունում տպագրության է հանձնվել «Ինչպես հավաքել և գրանցել ժողովորական պարերը» աշխատությունը, որը պատերազմի պատճառով չի հրատարակվել:
- 1942-1959թթ. - Աշխատել է Ռ. Աելիքյանի անվան Երաժշտական կաբինետում որպես ավագ գիտաշխատող:
- 1945-1963թթ. - Դասավանդել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում:
- 1956թ. - Մտացել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան՝ «Դայ ժողովորի հիմավորց պարերն ու թատերական ներկայացումները» ուսումնասիրության համար:
- 1958թ. - Լույս է տեսել «Դայ ժողովորի հիմավորց պարերն ու թատերական ներկայացումները» ուսուերեն մենագրության առաջին հատորը:
- 1959-79թթ. - Աշխատել է ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնում, որպես ավագ գիտաշխատող:
- 1964թ. - Նրան շնորհվել է ԽՍՀ գիտության վաստակավոր գործի կոչում:
- 1972թ. - Լույս է տեսել «Դայ ժողովորի հիմավորց պարերն ու թատերական ներկայացումները» ուսուերեն մենագրության երկրորդ հատորը:
- 1973թ. - Պարզեատրվել է «Պատվո նշան» շքանշանով:
- 1979թ. - Մահացել է Երևանում:
- 1983թ. - Լույս է տեսել «Դայկական հիմավորց պարերը» գիրքը ուսուերեն լեզվով:
- 1993թ. - Երևանի ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում տեղի է ունեցել Սրբուհի Լիսիցյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական նիստ:
- 1993թ. - Արբուհի Լիսիցյանի անունով է կոչվել Երևանի «Միջթար Աերաստացի» կրթական համալիրի դպրոցը:
- 1979-95թթ. - Երևանում գործել է Ստեփան և Սրբուհի Լիսիցյանների անվան ազգագրական-բանագիտական արխիվ-կարինետը: